№ 225 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12 — 1905 — ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12 № 225

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

Ալէքսանդր Ստեփանեան Անանեանը իր որդկերանցով և հարսով ցաւօք սրտի յայտնում է բարեկամներին և ազգականներին իր ամուսին

ՌՕԶԱԼԻԱ ԴԱՒԹԵԱՆ ԱՆԱՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը կատարվելու է շաբաթ երեկոյեան ժամի 7-ին Գօլովինսկի, № 22 (տուն Միրզոյեանի), իսկ յուղարկաւորութիւնը լինելու է կիրակի, ամսոյ 13-ին, առաւօտեան ժամի 10-ին, դէպի Զրկինենց ս. Կարապետ եկեղեցին, իսկ այնտեղից Վերայի հանգստարանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վստահութիւն. Գրադարան-ընթերցարան. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մաքեր և փաստեր. Բանւորական շարժումը Խարկովում. Հասել է գերեզմանի ծայրին. Մարմօրէկի շիլուկը. Նամակ Մոսկվայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր Թիւրքիայից. Նամակ Գերմանիայից. Նամակ Ամերիկայից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Մեք ընթերցողները գիտեն, որ հոկտեմբերի 17-ի Մանիֆեստի առիթով երկիւղ ծագեց, թէ մի գուցէ յետադէմ, պահպանողական ոյժերը կարողանան ազդել կառավարչական շրջանների վրա և կանգնեցնել այն ազատարար գործը, որ սաւված է Մանիֆեստով։

Յեռաշարժ նահանջման երկիւղը այնքան ազդել է ռուսական գործողների մի քանի խոշոր խմբերի վրա, որ նրանք շտապում են յայտնել դուռ Վիտէին իրանց պատրաստութիւնը աջակցելու և նպաստելու նրան, միայն թէ վտանգված չը տեսնեն Մանիֆեստով խոստացված բաքենորոգումները։

Մօսկվայում ժողովված զեմստվային գործողների ժողովը իր մեծամասնութեան հաւանութեամբ նոյնպէս յորում է այն տեսակէտին, որ պէտք է օժանդակել Վիտէին, որպէս զի նա չը հեռանայ ասպարէզից և ըէակցիան նորից գլուխ չը բարձրացնի։ Ճառախօսների մեծամասնութիւնը առաջարկում է վստահութիւն յայտնել Վիտէին և նրան ուժեղացնել զեմստվային գործողների համակրութեամբ և օգնելու պատրաստականութեան հաւաստիացումներով։

Մի հանգամանք սակայն մոռանալու թիւն է պատճառում շատերին. այդ այն է, որ չը լինի թէ Վիտէին աջակցելու պատրաստականութիւնը կամ խոստումը մի քանի ժամանակից յետոյ պահանջէ այդ գործողներից զիջումներ և գուցէ այնպիսի զիջումներ, որոնք արդէն էական լինեն և խոշոր՝ իրանց բնաւորութեամբ։

Այդ պատճառով զեմստվային գործողները պէտք է մի պայման համարեն հիմնական, որ նրանք անկարող կը լինեն աջակցել Վիտէին, հէնց որ նա խօսք կը բարձրացնէ որ և է սահմանափակումների և զիջումների մասին, որոնք որ և է կերպով աննպաստ կարող են լինել Մանիֆեստի խոստացած ազատագրական կէտերի համար։

Եւ անկասկած կառավարութիւնից է կախված զեմստվային գործողների աջակցութեան խնդիրը։ Եթէ կառավարութիւնը անկեղծ և հաստատ քայլերով կը սկսէ իրագործել մանիֆեստը լայն ըմբռնողութեամբ, նա վստահութիւն կը ներշնչէ դէպի ինքը և իսկական խաղաղութիւնն ու բարեկարգութիւնը կապահովէ պետութեան համար։

ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ամբողջ տասնվեց տարի է, որ Թիֆլիսում գոյութիւն ունի էժանագին հայ գրադարան-ընթերցարան։ Այդ գրադարանը, լինելով բացված մասնաւոր անձերի անունով, անկարող էր դառնալ հասարակական հիմնարկութիւն այն մթոքով, որ նրա պահպանութեան և զարգացման գործը կատարվեր հրապարակական կերպով։ Գրադարանը ունեցել է համակրողների մի որոշ թիւ, որոնք աշխատել են իրանց աջակցութեամբ ներպատել գրադարանի գոյութեանը, լաւ հասկանալով, որ հայկական գրադարան-ընթերցարանը անհրաժեշտ մի կարիք է Թիֆլիսի հայերի համար։

Գրադարանը իր տասնվեց տարվայ գոյութեան ընթացքում ունեցել է և շատ լաւ և շատ ծանր տարիներ։ Մի ժամանակ գրադարանի օգտին տրվում էին պաշտօնական թոյլտուութեամբ երեկոյթներ, բայց յետոյ վերջիններս արգելքների ենթարկվեցին։ Համակրողների խումբը ստիպված էր պահպանել գոյութիւնը սեփական միջոցներով։

Այժմ գրադարանը դեռ ամրապնդված չէ, քան անցեալում։ Բայց մենք կարծում ենք, որ այժմ կարելի է բոլորովին ուրիշ կազմակերպութիւն տալ գործին։ Ինչու համակրողները նախաձեռնութիւն չեն վերցնում կազմելու մի յատուկ գրադարանական ընկերութիւն որոշ կանոնադրութեամբ և դարձնել գրադարանը կատարելապէս հասարակական մի հիմնարկութիւն։

Եթէ այսպիսի մի միտք իրագործվի, այն ժամանակ նրան կարելի կը լինի տալ աւելի լայն բովանդակութիւն և նպատակներ։ Օրինակ, կարելի կը լինէր այնպէս ծրագրել գործը, որ նոր կազմվելիք ընկերութիւնը իր վրա վերցնէր առհասարակ գրադարաններ և ընթերցարաններ հիմնելու հոգատարութիւնը և նպաստէր գրադարաններ բանալու ոչ միայն Թիֆլիսում, այլ և Թիֆլիսից դուրս գտնված տեղերում։

Ընթերցանութեան կազմակերպութեան գործը ինքն ըստ ինքեան շատ ժամանակակից և կենսական խնդիրներից մէկն է։ Մեր ժողովուրդը ուզում է կարդալ և պէտք է կարդայ, և այն էլ պէտք է շատ և լաւ կարդայ։

Գրադարանական գործի կազմակերպութիւնը և ղեկավարութիւնը բաւարարութիւն կը տայ մի հերթական կարևոր պահանջի։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշուց ստացած նորագոյն տեղեկութիւնները օտարոտի են, բայց մեր ժամանակի համար շատ բնորոշ։

Հայերի և Թուրքերի մի խումբ շնորհակալական և գովասանական ուղերձներ է տալիս գեներալ-նահանգապետ Տակայշվիլուն նրա գործունէութեան համար։ Մի այդպիսի բնաւորութիւն կրող հեռագիր էլ, ամենաթարմ, տպում ենք այսօր։ Բայց մի և նոյն ժամանակ մեզ նկարագրում են Շուշին և հարևան գաւառները թշուառագոյն վիճակի մէջ, հայ գիւղերը ենթարկված էկզէկուցիայի, հայ մարդիկ բանտարկված և պատժված։

Շնորհակալութիւն աւերների, էկզէկուցիաների, պատիժների և զրկանքների համար—դա մի հանելուկ է, որի լուծելը դրված է հասարակութեան առաջ։

Բայց մի բան կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին, որ այս օրերս մի պաշտօնական անձ պէտք է Գանձակ ուղարկվի Տակայշվիլու գործունէութիւնը քննելու համար։ Այն ժամանակ գուցէ հանելուկն էլ կը բացատրվի։

Շուշուց երէկ Թիֆլիս հասած մի քանի անձեր մեզ նկարագրում են երկրի վիճակը շատ մութ գոյներով։ Հայ ազգաբնակութիւնը ապահով չէ իր վաղվայ օրվայ համար։ Քաղաքի մասերի մէջ երթևեկութիւնը կատարվում է մեծ զգուշութեամբ։ Գաւառներից հասնում են տխուր լուրեր։ Վերջին օրը լուր է հասել, որ հայ Ալիղուլի գիւղը ենթարկվել է յարձակման Թուրքերի կողմից և վիրավել են հայերից մի քանի անձեր. իսկ միլիոնները պատապարվել են ուրիշ տեղերում։ Այն գիւղերում, ուր կօզակներ են դրված երբև պահապաններ, ժողովուրդը շատ ճնշված է կարգի և հանգստութեան այդ հովանաւորներից։

Շուշի-Ելիսաւ ճանապարհի վրա երթևեկութիւնը կատարվում է կօզակների պահպանութեամբ։ Հայերը չեն վստահանում Թիֆլիսից և Բաղուից ապրանքներ փոխադրել դէպի Շուշի, ուստի և մթերքների գները սաստիկ թանգացել են։ Շաքարը ծախվում է 40 կոպէկով ֆունտը, մոմը 35—40 կոպէկ։ Նաւթը ժամանակս էր 25 կոպէկ, միայն վերջերս եղել է միայն 8 կոպէկ ֆունտը։

Երկիւղ կայ, որ եթէ իրերի վիճակը չը բարւոքվի, ալիւրի գինը բարձրանայ, որովհետև շուկայում միայն մի երկու ամսվայ պաշար կայ։

Շուշուց հետևեալ հեռագիրն է ուղարկված կովկասեան Փոխարքային նոյեմբերի 11-ի առաւօտեան 9 ժ. 33 րոպէին.

«Մահմեդական և հայ պատգամաւորները միացեալ ժողովով, 40 հոգու մասնակցութեամբ, յայտնելով լիակատար վստահութիւն և խորը համակրանք գեն. Տակայիշվիլու կարգադրութիւններին՝ երկիրը խաղաղացնելու վերաբերմամբ, աչքի առաջ ունենալով նրա լիակատար ուղղամտութիւնը (կօրրեկտ), յարգանօք խնդրում ենք ձեր պայծառափայլութեանը չը զրկել ազդաբնակութիւնը մի այդպիսի գործչից մինչև որ նահանգը վերջնականապէս խաղաղվի»։ Սորագրել են. Հաշիմ-բէկ Վէզիրով, Սարիջալինսկէյ, Իշխանեան, Մէլիք-Փաշայեան, Մուրադով, Ղուլիեվ, Համբարձումեան, Տէր-Սարգսեան, Հախվերդեան, Մուսաեվ, Սաֆարով, Ալիանով, Նարինեան, Ախունդով, Սէյդի-Բէկով, Սուլէյմանով, Հաջիեվ, Ջիվանշիր, Սարուխանով, Շախիեվ, Աղալարով, Ջիվանշիր, Մահմէդով, Ալիեվ, Նասիրբէկով։

Երբ Թուրքերն սորագրում են մի այդպիսի հեռագրի, մենք այդ կարող ենք հասկանալ. գեներալ Տակայիշվիլին միշտ գործել է նրանց օգտին, ի վնաս հայերի։ Բայց երբ Զաւադ Իշխանեանի կամ Ներսէս Մէլիք-Փաշայեանի նման հայ մարդիկ են սորագրում այդպիսի մի վարկաբէկ հեռագրի տակ, այդտեղ արդէն մենք հրաժարվում ենք ըմբռնել այդ հայերի լօգիկան։

Երևանի նահանգական ժանդարմերիայի գլխաւորը պաշտօնապէս հաղորդագրում է գեն. Շիրինկինին նոյեմբերի 9-ին, որ հոկտեմբերի 30-ին 5 զինուոր նշանակված էին ուղեկցելու հայերի պաշարեղէնին Նախիջևանից դէպի Իթդան գիւղը։ Ճանապարհին զինուորները իրանց հրացանները տուին մի զինուորի և իրանք սկսեցին բարձրացնել վայր ընկած բեռը։ Այդ ժամանակ նրանց վրա յարձակվեցին մի քանի Թուրքեր, խլեցին հրացանները և 320 փամփուշտ, սպանեցին ուղեկցող հայերից 4 հոգու և փախան։—Այդ առիթով մեր ընթերցողներն արդէն մի մանրամասն լուր կարդացել են «Մշակում», բայց սա մենք առաջ ենք բերում պաշտօնական աղբիւրից, որպէս զի պարզ երևայ, որ կառավարութիւնը ոչնչերև տեսնում է կատարվող ոճիրները Երևանի նահանգում, բայց ոչ մի կտրական միջոցի չէ դիմում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Խաղաղվում է Կովկասը։ «Русскія Вѣд.» լրագիրը, հիմնվելով իր ստացած տեղեկութիւնների վրա, կարծում է թէ դրութիւնը կարծես թէ հանգստացնող ընթացք է ընդունում։ Երանի, ով հաւատում է։ Լրագիրը, չը գիտենք ինչու, ասում է թէ այժմ Կովկասում ամեն տեղ վերացրված է պատերազմական դրութիւնը։ Մենք, ի հարկէ, գիտենք որ դա ճիշտ չէ։ Դուրիայի վերաբերմամբ կառավարութիւնը զիջող քաղաքականութիւն սկսեց։ Դա, լրագրի կարծիքով, ցոյց է տալիս, որ Կովկասի դրութիւնը ճիշտ է հասկացվել և գնահատվել։

Երկիրը—ասում է դուս լրագիրը—մի տարվայ ընթացքում կրելով դաժան խառնակութիւններից, յոգնել է խիստ միջոցներից և փափագում է հանգստութեանը։ Կառավարութիւնը, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստով յայտարարել է մի շարք ըէֆորմներ, պարտաւոր է տալ այդ հանգստութիւնը Անդրկովկասին։ Եւ նա կարող է տալ։ Դրա համար նախ քան որ և է ըէֆորմների դիմելը, հարկաւոր է արմատապէս մաքրել Կովկասեան ադմինիստրացիան, հեռացնել նրանից իշխան Գօլիցինի դրած մարդկանց, Ջարդերի այդ վարպետներին, որոնք արտաւորվել են վերջին տարիների ընթացքում, մի խօսքով արմատական անել մարդասիրութեան բոլոր, որ խնամքով կառուցվում էր Գօլիցինի կառավարութեան ամբողջ ընթացքում։ Այս միջոցը բոլորովին անհրաժեշտ է։ Եթէ չեն վստահանում դիմել այս միջոցին, երկիրը դեռ երկար ապահովված չի լինի այն սարսափներից, որոնք բռնկվեցին արդէն մանիֆեստը յայտարարելուց յետոյ Թիֆլիսում և մասնաւոր Բաքուում։ Մաքրել ադմինիստրացիան և դրանից յետոյ իսկոյն դատի ենթարկել իշխանութեան այն ներկայացուցիչներին, որոնք համարվում են Ջարդերի կազմակերպող, Ջարդերի վերաբերմամբ անտարբեր կամ նոյն իսկ համակրող եղողներ—ահա ինչն է մօտագայ անհրաժեշտ միջոցը։ Սրանից յետոյ միայն կարելի կը լինի խօսել սոցիալական ըէֆորմների և կովկասեան ինքնավարութիւնը նոր հիմքերի վրա կազմակերպելու մասին։ Մինչև որ այս բանը չիրագործվի, գուրիականի նման ապստամբութիւնները շուտ չեն վերջանայ։

Այո, այս բոլորը շատ ճիշտ է։ Կովկասի իւրաքանչիւր բնակիչ համոզված է, որ միայն և միայն այս միջոցներով կարելի է խաղաղութիւն հաստատել Անդրկովկասում։ Բայց դրա համար պէտք է որ կովկասեան կառավարութիւնը ցոյց տայ մեծ եռանդ, գործելու տրամադրութիւն։ Սակայն մինչև այժմ այդպիսի եռանդի և գործունէութեան նշոյներ չեն երևացել։ Փոխանակ գործի, փոխանակ անկեղծ ցանկութեան մաքրելու Գօլիցինի սարսափութիւնից Ցեցան Աւգեան ախոռները, մենք տեսնում ենք շարունակ վարչական անձերի փոփոխութիւններ. գալիս են նոր պաշտօնակալներ, հեռանում են ուրիշները, իսկ սայլը տեղից չէ շարժվում։ Եւ դա հասկանալի է. գօլիցինեան խմբը ցնում է, բիւրօկրատական աշխարհը շարունակում է տոգորված ցնալ հին թունաւոր հասկացողութիւններով և նախապաշարմունքներով։ Եւ

մենք միանգամայն հաւատացած ենք, որ՝ մեր երկրի զժբախտ դրութիւնը պիտի երկար շարունակվի, մինչև որ վարչական մեքենան չը բարեփոխվի, նոր շունչ չը ստանայ։ Այդ բանը հրաշքով չի կատարվի։ Միայն ժողովրդական սկզբունքն է կարող փրկարար հանդիսանալ այս վիթխարի անկարողութեան մէջ...

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XIII

Ռուսաստանի ողջամիտ, պրոգրեսիստ և ազատամիտ շրջանները, քաղաքական կուսակցութիւնները, որոնք համախմբվելով կազմել են սահմանադրական-ռամկավարական մի ընդհանուր զօրեղ կուսակցութիւն և որոնք սկզբում մերժեցին կոմս Վիտտէին՝ իրանց աջակցութիւնը, այժմ, ինչպէս կարելի է դատել երեկվայ պաշտօնական և մասնաւոր հեռագիրներից, սկսում են հակվել այն եզրակացութեան, որ պէտք է աջակցել կոմս Վիտտէի մինիստրութեան՝ որպէս զի նա կարողանայ իրագործել հոկտ. 17-ի մանիֆեստով խոստացված սահմանադրական ազատութիւնները։

Գոնէ զեմստվային և քաղաքային գործիչների համաժողովը և ուրիշ շատ հասարակութիւններ՝ Ռուսաստանի զանազան անկիւններից, այն համոզմունքն յայտնեցին, թէ կառավարութիւնը կարող է յոյս դնել հասարակութեան ընդարձակ խաւերի գործակցութեան և աջակցութեան վրա, եթէ Վիտտէի մինիստրութիւնը կեանքի մէջ կը մտցնէ մանիֆէստի սահմանադրական սկզբունքները, որոնք բաւարարութիւն են տալիս ժողովրդի պահանջներին։

Ի՞նչը ստիպեց պրոգրեսիստներին և չափաւոր քաղաքական կուսակցութիւններին շնորհել Վիտտէի մինիստրութեան իրանց աջակցութիւնը, որը առաջ զլանում էին նրան, երբ նոյն Վիտտէն դիմեց և խնդրեց նրանց գործակցութիւնը։

Պատճառը շատ պարզ է։ Ռուս ժողովրդի առաջադէմ և ողջամիտ մասը, որ այժմ համախմբվել է իր լաւագոյն ոյժերով սահմանադրական-ռամկավարական (դեմօկրատական) կուսակցութեան շուրջը, տեսնելով որ մի կողմից սասականում է Ռուսաստանի [illegible] շարժումը, որ սպառնում է ամբողջ երկիրը վերածել արեան ծովի, միւս կողմից ըէակցիան հսկայական ջանքեր է անում խեղդել նոր, սահմանադրական ըէժիմը արեան վտակների մէջ և վերականգնել ինքնակալական անբարոյականացուցիչ ըէժիմը, խոհեմութիւն համարեց, հայրենիքը և ազգը վերահաս մեծամեծ աղէտներից փրկելու համար, աջակցել կառավարութեան՝ կեանքի մէջ մտցնել սահմանադրական սկզբունքները և ազատութիւնները, որոնք միայն կարող են կարգ և հանգստութիւն վերահաստատել լայնածաւալ կայսրութեան մէջ, և մերժել, ծայրահեղ և փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւնների պահանջները, որոնք, ներկայ տագնապալից րոպէին, երբ դեռ սահմանադրական սկզբունքը չէ իրագործված, երբ դեռ ամէն բան թղթի վրա է, դեմօկրատական-հանրապետութեան անիրագործելի պահանջ են դնում։

Այո, այլ ևս ոչ մի կասկած չը կայ, որ նախկին, ըէակցիոնական ըէժիմը, որի ճիրաններից ժողովուրդը ուղղակի գլխից, խլեց հոկտ. 17-ի մանիֆէստը, մի հսկայական դաւադրութիւն էր սարքել, հակա-յեղափոխութեան դաւադրութիւն։ Ոչ միայն ռուսական մամուլը, այլ և անգլիական բոլոր նշանաւոր թերթերի, — «Ստանդարտ», «Դէյլի Նիւս», «Դէյլի Թելեգրաֆ», «Թայմս» — թղթակիցները Օդէսայում և Գ. Բուրգում վկայում են, որ ամբողջ Ռուսաստանում հոկտ. 22-ին կատարված քաղաքացիական եղեռնագործութիւնները, կոտորածները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ կազմակերպված դաւադրութիւն հին կարգի կողմից, որ իր վերջին փորձն էր կատարում հանգցնել ծագող օրվայ արշալոյսը մարդկային արեան ովկիանոսով և այնպիսի անգթութիւններով, որոնց առաջ զալկանում են նոյն իսկ քիւրդերի զազանութիւնները Թիւրքայ Հայաստանում։ Հին ըէժիմի ծառաները կուռում են այժմ իշխանութեան, տեղի համար, ամէն բան անկօնտրոլ կերպով անօրինելու իրաւունքի համար, բոլոր քաղաքացիների երջանկութիւնը և ունեցածը անհաշիւ կերպով կարգադրելու իրաւունքի համար, ինչպէս արել են մինչև [illegible]։ Եթէ քաղաքացիները կը միանան, հրէաների կոտորածներին կը հետևեն ինտելիգենցիայի, ուսանողների, բանուորների կոտորածները... («Դէյլի Թելեգրաֆ»)։

Այս գուշակութիւնը արդէն իրականութիւն դարձաւ, որովհետև թէ Օդեսայում, թէ Թիֆլիսում, թէ ուրիշ քաղաքներում բազմաթիւ ուսանողներ, գիմնազիստներ իրանց վարդագոյն արիւնով ներկեցին արդէն սալայատակները, ընկնելով խուլիգանների—հին ըէժիմի այս նոր կազմակերպված մարդասպան զօրքերի—հարուածների ներքոյ։

«Թայմս» լրագիրը հետևեալն է գրում։

«Բիւրօկրատիական ըէժիմը չէ կամենում մեռնել։ Նա յուսահատաբար ընդդիմանում է և կանգ չէ առնում վճռապէս ոչ մի միջոցի առաջ։ Բայց նա ապացուցեց իր կատարեալ բարոյական սնանկութիւնը այն սարսափներով, որոնք կատարվեցին այժմ նրա ծրագրով։ Երբ որոշ կարգի պաշտպանները դիմում են հասարակութեան տականքների զինաւորման և սրում են նրանց ճնցած ազգայնակութեան դէմ, այդպիսի ըէժիմի վախճանը մօտ է։ Սպանութիւններով և կողոպտումներով չէ կարելի կանգնեցնել դէպքերի ընթացքը։ Ի՞նչ կարելի է ասել այն կուսակցութեան մասին, որ յենվում է մարդասպանների և կողոպտողների վրա»։

Սակայն անգլիական լրագրի գուշակութիւնը հին ըէժիմի մօտալուտ վախճանի մասին, այնքան էլ հիշդ չէ։ Նա դեռ չէ կամենում զենքերը վար դնել։ Շատ ճիշդ նկատում է այդ առիթով «Рус. Вѣд.» լրագիրը. «Ի մեծ զժբախտութիւն Ռուսաստանի, ոչ մի երկիր աշխարհումս այնքան թանգ չը վճարեց իր քաղաքացիական ազատութեան համար, ինչպէս Ռուսաստանը։ Քառասուն տարի զոհեր են ընկնում։ Ֆրանսիայում, ամբողջ տէրրօրի ժամանակ այնքան մարդ չը փչացաւ, ինչքան վերջին ամիսները մեր քաղաքների փողոցներում ընկան։ Ամբողջ արևմտեան Եւրոպայում 1848-ին չը կորան այնքան զոհեր, ինչքան չորս օրվայ ընթացքում Օդէսայում։ Եւ որովհետև մեռածներին արդէն չէ կարելի կենդանացնել, թող գոնէ դրանք վերջին զոհերը լինեն նոր օրվայ լուսադէմին»։

Եւ ահա նոր սոսկալի զոհերի առաջն առնելու և ըէակցիայի հիդրայի գլուխ ծանծաղ [illegible] ազատագրով Ռուսաստանի բոլոր պրոգրեսիստ և չափաւոր քաղաքական կուսակցութիւնները իմաստութիւն և խոհեմութիւն համարեցին աշխատել օր առաջ մտցնել կեանքի մէջ սահմանադրութիւնը։

Դեռ մեր նախորդ յօդուածներից մէկում մենք ևս այն միտքը յայտնեցինք, որ Կովկասի ազգաբնակութիւնը, նրա հետ և հայերս, օր առաջ պէտք է շտապենք յարել, միանալ ռուս սահմադրական-դեմօկրատիական կուսակցութեան և նրա ծրագրին, որպէս զի կարողանանք շուտով վերահաստատել մեր երկրում կարգը, խաղաղութիւնը և զսպել այն վայրագ տարրերը, որոնք ահա ութ ամսից ի վեր իրանց նպատակ են դրել քամել, ջլատել հայութեան կենսական ոյժերը և նրան ուժասպառ անել։

Շահրիար

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԽԱՐԿՕՎՈՒՄ

II

Հոկտեմբերի 11-ին

Երեկվայ մեր գուշակութիւնը կատարվեց. այսօր Նիկոլաեվեան հրապարակը հանդիսացաւ արիւնահեղ ընդհարման բեմ, որի մասին հեռագիրը անշուշտ լուր բերեց, սակայն այդ ընդհարման նախերգանքները այն սարսափելի հետաքրքիր են, որ արժէր մի փոքր երկար կանգ առնել։

Մենք նկարագրում ենք այն, ինչի որ ականատես ենք եղել։

Առաւօտեան ժամի տասն է, քաղաքը շփոթված դրութեան մէջ է, խանութները չեն բացվում, այլ շտապով իւրաքանչիւր խանութպան տախտակներով ամրացնում է իր խանութի վիտրինաները։ Զօրք շատ քիչ է երևում։ Ժողովուրդը խռնվում է համալսարանի հրապարակի և նրա մօտ փողոցների վրա։ Ընդհանուր հետաքրքրութեան կենտրոնը կազմում է համալսարանը։ Ուսանողներ, բանուորներ, զործաւորներ և նոյն իսկ քաղաքացիներ ու օրիորդներ համալսարանի բակից դուրս բերելով երեք արշին երկարութեամբ և գերանի հաստութեամբ ահագին վառելափայտը, շինում են երկու վիթխարի բարիկադներ ամբողջ փողոցի լայնութեամբ համալսարանի երկու կողմերից այնպէս, որ մուտքի դէմ մնում է մի հրապարակ, երկու կողմից պաշտպանվելով բարիկադներով։ Հեռախօսի թելերը կտրատում են և ցանցաձև ձգում բարիկադների երկարութեամբ և ապա վայր գլորում հեռախօսի սիւները բարիկադները աւելի ևս ամրացնելու համար։ Համալսարանի մէջ և կտրի վրա տեղ են բռնում քարերով, փայտերով և այլ բաներով զինված ցուցարարները։ Գնալով ամբոխը շատանում է, դրագոններ և կօզակներ վաշտ վաշտ գալիս են այդ աշխատանքը տեսնում և հեռուից և այլ կողմ ծավում ու անցնում։

Ահա համալսարանի կտուրի և բարրիկադների վրա բարձրանում են կարմիր դրօշակներ զանազան մակագրութիւններով։ Համալսարանի հրապարակի արևելեան կողմում բարձրանում է Սօբօրի հսկայ զանգակատունը իր հսկայ զանգով։ Եւ ահա համալսարանից տրվում է նշան. Սօբօրի զանգը արձակում է իր վիթխարի զողանջը անընդհատ. համալսարանի կողմից լսվում է ազգային երգը, որը բերանէ բերան անցնում է հրապարակի ամբողջ երկարութեամբ՝ ընդունելով մի տարերային, միևնոյն ժամանակ մի վեհ ոգևորիչ տպաւորութիւն։ Այս տեսարանը տևում է մի քանի րոպէ։ Ապա սկսվում է բոլոր յեղափոխութիւններին յատուկ մի նոր աւերում։

Համալսարանի հրապարակի արևմտեան կողմում համալսարանից սկսած մինչև պասսաժը ձգված է եռյարկանի մի հին վիթխարի շինութիւն, մօտ 40 սաժէն երկարութեամբ և 20 սաժէն լայնութեամբ։ Այդ շինութիւնը առաջ ծառայելիս է եղել զառատանական հիմնարկութիւնների համար. բայց շէնքի խարխուլութեան պատճառով հիմնարկութիւնից դուրս են գնացել, թողնելով այնտեղ արխիվներ։ Իսկ շէնքի դիմաց ձգված է ծաղկանոց և այդի՝ իր երկաթեայ ցանկապատով։ Ահա այդ շէնքի և ցանկապատի հետ ուզեց հաշիւ վերջացնել ցուցարար ամբոխը իր չարաճճիներով իր կռվողներով։ Ահագին աղմուկով վայր են թափվում ապակիներ, լուսամուտի փեղկեր, դռներ, նրատարաններ, սեղաններ, տախտակներ, ահագին արխիվներ և դարակներ. մի քանի րոպէի մէջ կոտրատվում են երկաթէ ցանկապատերը և խարխուլ շինութեան միջից դուրս թափված իրերի հետ միասին մի մեծ նոր բարիկադ [illegible] պասսաժը ապրուրց տրուշ դարակաւոր շարքը։ Այդպիսի մի բարիկադ էլ կանգնեցնում են սաբօրի կողքի փողոցի ծայրին։ Համալսարանի հրապարակը պաշտպանվում է չորս կողմից բարիկադներով, իսկ ներսը հրապարակի վրա կատարվում է մի չտեսնված բան. հազարաւոր ձեռքեր վերցնում են արխիվի կապոցները, կտրատում թելերը և չզրտում օդի մէջ. մի քանի րոպէ շարունակ թերթերը պտույտ են գալիս օդի մէջ, ինչպէս ձիւնի փաթիլները, մինչև որ ահագին հրապարակը ծածկվում է թղթերով. հանգիստ չեն թողնում նաև պասսաժի՝ դէպի այդ հրապարակը ուղղված միջանցքի լուսամուտները, բոլոր ապակիները խշրտալով ցած են թափվում։ Այս գործը համալսարանի շուրջը տևում է մինչև ժամի 12-ը, երկաթուղու և շոգեմեքենաների գործարանի տասնեակ հազարաւոր բանուորների հոսանքի ծայրը չը կայ։ Զօրք էլ չէ մօտենում։

Ամբոխը այժմ քաշվում է Նիկոլաեվեան հրապարակը, որը և դառնում է դէպքերի գլխաւոր կենտրոնը։ Հրապարակի ցածում—Մօսկովեան փողոցի ուղղութեամբ, կանգնած է բազմութիւնը, որը սուլոցներով ընդունում է անց ու դարձ անող պահակներին։ Զօրքը խոյս է տալիս ընդհարումներից, նա վախում էլ է։ Ցանկարծ այդ նոյն տեղում նկատվում են լրարանցում, սուլոցներ և ապա մի քանի պայթոցներ. ամբոխը սկսում է փախչել, խուլիգանների մի հարիւրակ, հակացոյց կազմած՝ մօտենում է ցուցարարներին, որ և յետ է մղվում։ Այս բանը աւելի ևս կատաղեցրեց նրանց, ուսանողները կոչ արին, խօսեցին ճառեր և ապա մեծ հոսանքով յարձակվեցին Սպասրի զինավաճառանոցի վրա. հնար չեղաւ երկաթեայ ցանցաւոր դռները կոտրել, շուտով հասցրին երկաթէ ձողեր և կացիններ և հէնց այն էր դուռը յետ ծալեցին ուզում էին ներս մտնել, երբ ներսից պայթեց հրացան. ցուցարարները փախան, բայց նորից յետ դարձան այս անգամ քարերով զինված։ Զինավաճառի դռները քարկոծվեցին, բայց ներսից նորից տրաքեց հրացան. տէրը պաշտպանում էր խանութը։ Ամբոխը աւելի կատաղեց. այս անգամ յարձակվեց բաղի դռան վրա. հակառակ կողմի տանիքից ամբոխի վրա ատրճանակ արձակեցին, քարերը այս անգամ էլ այն կողմը դարձան։ Պահակ կօզակներ և դրագոններ 20—30 ով գալիս անցնում էին։ Ամբոխը մի րոպէ խաղաղվում էր և նորից սկսում։ Զինավաճառի խանութից շարունակում էին կրակել, ամբոխը մօտեցնեց, բաղի երկաթէ դուռը ընդհանուր ուժով կոտրեց և ներս մտաւ. Ի՞նչ պատահեց խանութի տիրոջ և գործակատարների հետ, յայտնի չէ. մի սոսկալի իրարանցման մէջ և միմեանցից խլխլելով մի քանի րոպէում խանութի ապրանքը—հրացաններ, ատրճանակներ և սրեր թալան թալան արին։ Դուրս բերած հրացաններից և ատրճանակներից մի քանիսը արձակեցին. բայց ի հարկ է մեծ մասը առանց փամփուշտների էին։ Այս բոլոր գործողութիւնը տևեց մի ժամից աւելի։

Վերջապէս դրագոնների մի վաշտ իր օֆիցերի հետ եկան դէպի զինավաճառը թալան տուող ամբոխը. շարքով կանգնեցրին զօրքը, ինքը մօտեցաւ ամբոխին համոզելու ցրվել. չը լսեցին, սկսեց օֆիցերը սպառնալ, ասելով որ զինուորական դրութիւն է յայտարարված, դարձեալ անօգուտ, հրամայեց զօրքին մերկացնել սրերը, բայց ցուցարարներից ուսանողներ և ոչ ուսանողներ մօտեցան օֆիցերին և սպառնալիքով ու համոզիչ խօսքերով ստիպեցին վերադառնալ։ Օֆիցերը զօրքին հրամայեց սրերը տեղ դնել և հետևել իրան։ Ահագին ժողովուրդը մի քանի հազարներով, որը աւելի և աւելի աճելով բռնել էր ընդարձակ հրապարակի բոլոր մայթերը և նոյն իսկ հրապարակի մի մասը, համակրական ցոյցեր արեց զօրքին, զօրքերից մի քանիսը պատուի նշան արին։ Սպասրի զինավաճառի առաջ խմբված ցուցարարները աւելի ևս ոգևորված շարունակեցին զէնքերի ցրումը, սրերը արդէն մերկացրված էին, բայց այդ այլ ևս երկար չը տևեց։ Կօզակների մի վաշտ երկու օֆիցէրներով բոլոր ուժով քշեց դէպի ցուցարարները, սակայն դեռ կողոպտված զինավաճառին չը հասած՝ մի օֆիցերը ձիու սայթաքումից երեսնիվեր այնպէս ուժով զարկվեց քարէյատակին, որ մի րոպէ անշարժ մնաց, ապա շարժվեց շատ դժուարութեամբ. նա ճնշված էր։ Բարձրացաւ սուլոց և աղաղակ, դա կատաղացրեց միւս օֆիցէրին, որը հրամայեց զօրքին զասպնել շարքով և իջեցնել զէնքերը, քամակից հասաւ դրագոնների մի վաշտ և ապա մի վաշտ էլ զինուորներ ժողովրդից սկսեցին յետ քաշվել։

Օդը խտացել, էլէքտրականութեան էր վերածվել, ցուցարարները մօտեցնեցին. սկսվեց ծանր րոպէն։ Բոլոր զօրքերը հրաման ստացան և սկսեցին զալպերը բոլոր ուղղութեամբ, ուր ժողովուրդը խռված էր։ Սկսվեց մի սոսկալի փախուստ, մի մեծ հոսանք եկեղեցու երկու կողմի փողոցներով—կից Սպասրի զինավաճառանոցի շարքին. մի մասն իրան ձգեց Պուշկինեան փողոց, որոնց թւում և մենք։ Երբ հասանք Պուշկինեան փողոցի ծայրին և յետ նայեցինք մեր անցած նեղ փողոցի դիմացի մայթը, տեսանք թէ ինչպէս փախչողներից վայր ընկաւ մէկը, ապա երկրորդը, ապա երրորդը, նրանցից երկուսը բարձրացան և սկսեցին կաղել կաղ գնալ, մէկը մնաց անշարժ և արիւնը լճացաւ, զալպերը շարունակվում էին, ամէն մէկը փորձում էր մտնել ուր էլ լինէր, Մի խումբ մտանք մի բակ. մեզանից մէկը ոտից վիրաւորված էր, երբ նրա ոտը մի քանի ուսանողներ և կողմնակի մարդիկ թաշկինակներով կապեցին և թեերի վրա առած դուրս բերին տանելու դէպի հիւանդանոց, մայթը բաւականին տարածութեամբ արիւնոտ էր։ Նորից լսվեցին զալպեր և փախուստ. այդ շարունակվեց մի քանի րոպէ։ Երբ մի փոքր անց դուրս եկանք փողոց՝ Նիկոլաեվեան հրապարակը բոլոր անցքերից փակված էր զօրքերով, մուտքը արգելված էր դէպի հրապարակը։ Դիմացի մայթի վրա դեռ ընկած էր դիակը, բայց թէ որքան դիակներ ընկած էին հրապարակի վրա, ոչ ոք տեսնել չէր կարող, բացի թեերին կարմիր խաչ կրողները, որոնք շտապով վազվզում էին այս և այն կողմ վիրաւորներին օգնութիւն հասցնելու համար, թէև նրանցից, որոնք ուսանողներ էին, շատ տեղ չէին էլ թոյլ տալիս։

Այս բոլորը քաղաքի կենտրոնում։ Ի՞նչ է կատարվում միւս մասերում յայտնի չէ։

Այսօր լրագիրներ չը կան, շատ հիմնարկութիւններ փակ են։ Համալսարանը իր միջի ուսանողներով և ժողովրդով պաշարված է։ Մնում են բարիկադները նոյնութեամբ և իրանց 10-ից աւելի կարմիր դրօշակներով։

Ասում են սպանվածների ու վիրաւորների թիւը 200-ից անց է։

Ա.—Դ.

ՀԱՍԵԼ Է ԳԵՐԵԶՄԱՆԻ ԾԱՅՐԻՆ

Յայտարարվել է խօսքի, խղճի, մամուլի, ժողովների ու ընկերութիւնների ազատութիւն, յայտարարվել է անձնաւորութեան անձեռնխեղութիւն. փշրվել, խորտակվել են լայնածաւալ պետութեան բազմամիլիոն ազգաբնակութեան դարաւոր ստրկութեան շղթաները, որոնց կաշկանդման ոյժը ծայրայեղ չափերի հասաւ մինիստր (ազաs մամուլի էջերում սազում է ասել՝ դահնապեs) Պլեվէի օրով։ Տօլստոյներ, Միխայլովսկիներ ու մտքի այլ խընկելի մշակներ ծնող Ռուսաստանը ազատվել է համաքեա «Դերժիմօրդաների» դաժան լծից ու հազիւ թէ այլ ևս տքնի նրա տակ, ազատութեան հաճն առած ժողովուրդը թոյլ չի տայ այդ...

Բիւրօկրատիան հասել է գերեզմանի ծայրին. այսօր-վաղը գլորվելու է այնտեղ, վերջ է դնելու իր խայտառակ գոյութեան խայտառակ մահով. նրա փտաղուրկ գերեզմանի վրա կը դրվին պսակներ նրա բազմամիլիոն զոհերի, մինչ այժմ իրաւազուրկ ժողովրդի, նզովքից, պարսաւանքից ու անէծքներից հիւսված... Նա մեխված է այսօր նշաւակման սիւնին, նա կրում է իր վրա միլիոնների թուք ու մուրը. նա անպայման արժանի է այդ պատժին, ստրկութեան շղթաները ջարդ ու փշուր արած ժողովրդական մասսաների միահամուռ, արդարացի տարերային ցասման... Ինչու. որովհետև անչափ ծանր, անչափ մեծ ու նողկալի են նրա, մարդատեաց, քարասիրտ բիւրօկրատիայի մեղքերը, նրա գործած ոճիրները, նրան խայտառակ փառքով պսակած անօրինակ սոսկալի յանցանքները... Վերջիններիս վրա երկար կանգ առնել հարկաւոր չէ. նրանք օրօրոցի մանուկներին անգամ յայտնի են։ Բիւրօկրատիան տասնեակ տարիներ շարունակ ամենայն աչալրջութեամբ ու խնամքով պահեց, պահպանեց խաւարի խեղդող մթնոլորտը խաղաղ Ռուսաստանում. Գոգոլներ, Դոբրոլիւբովներ ու Հերցէններ ծնող Ռուսիան դարձաւ սանձարձակ «Դերժիմօրեաների» աշխարհ. անկուլտուրականութիւնը հասաւ հրէշաւոր չափերի. վայրագ բարքերը, խրախուսվելով միշտ, համատարած դարձան. ցասման, հալածանքի ենթարկվեցին Տոլստոյներն ու Զերնիշևսկիները, Ռուսաստանի իսկական պարծանքները, ռուսաց գրականութեան ու հրապարակախօսութեան կօրիֆէյները, իսկ խնկարկվեցին, մեծարվեցին, պաշտամունքի առարկայ դարձան Սերաֆիմները, ծոմապահութեամբ ու աղօթքներով հռչակված ասկետները, կեանքից ու մարդկանցից անջատված վանականները... Ճնշվեց, խեղդվեց ազատ միտքը. իրաւունքն ու արդարութիւնը չքացան, անհետացան մարակի առաջ. վերջինիս գերիշխանութիւնը իր գագաթնակէտին հասաւ նրա անկեղծ երկրպագուի, նրա անդուսպ սիրահարի, օպրիչնիկ Պլեվէի օրով...

Ո՞ւր տարաւ այդ սիսեմը, այդ խելակորոյս ուղղութիւնը. մտաւոր ու բարոյական ցնաշխարհիկ ոյժեր արտադրող, ծնող Ռուսաստանին ո՞ւր հասցրեց դիշատիչ բիւրօկրատիան։ Բոլորն էլ այդ գիտեն. նա հասցրեց Ռուսաստանին Պօրտ-Արտուր, Մուկդէն, Ցուսիմա, ինչպէս մի ժամանակ, 35 տարի առաջ, Նապոլէօն III-ի նեխված բեժիմը, բարոյապէս փչացած բիւրօկրատիան հանձարների չքնաղ հայրենիքը, ազատութեան օջաղ Ֆրանսիային տարաւ հասցրեց Սեդան։ Ռուսաց քաջարի զօրքի՝ մինչ ազատալի պատերազմը՝ փտահեղ դրօշակները փտաղուրկ եղան Մանջուրիայի դաշտերում, տասնեակ հազարաւոր թանկագին կեանքեր անհետացան նրա անապատներում ու խաղաղ ովկիանոսի ալիքներում. վերջիններս ընդդրկեցին, լափեցին ու թաղեցին իրանց անդունդներում վիթխարի, անարկու զրահաւորներին, վաղարաւոր քաջարի ռազմիկներով. միլիարդներ նետվեցին Մանջուրիայի խորքերը ու խաղաղ ովկիանոսի ալիքները նետվեցին, կորան անհետ, կորան անօգուտ խապար...

Բիւրօկրատիան վաղ-ուշ այդպիսի աղէտների էր հասցնելու Ռուսաստանին և հասցրեց. թէ այդ և թէ ներքին աղէտները անխուսափելի էին։ Ինչու. որովհետև բիւրօկրատիան՝ մինչ անարկու զրահաւորները Պօրտ-Արտուրի ու Ցուսիմայի ջրերում խորտակելը՝ տարիներ ի ընթացքում անհամեմատ աւելի թանկագին զրահաւորներ, մտքի, գաղափարի զրահաւորներ է։ Յանձին բազմաթիւ Զերնիշևսկիների, Դոստաեվսկիների ու Դոբրոլիւբովների, խորտակել, թաղել բանտերում ու հեռաւոր Սիբիրի ցրտաշունչ վայրերում... Դառն իրականութիւնը ամենաազդու կերպով ցոյց տուեց, որ նիւթական զրահաւորը, նիւթական ոյժը, առանց մտաւոր ու բարոյական ոյժի ոչ մի արժէք չունի ազգի մրցման գործում։ Բիւրօկրատիան այդ չէր հասկանում ու հէնց այսօր էլ, անթիւ դառն փորձերից յետոյ, նոյն իսկ, չէ հասկանում այդ. դարձեալ դիմում է իր վաղեմի սիրուհուն, այժմս բաւականին քաւթառած մտրակին, դիմում է մտրակակիր օպրիչնիկների, խուլիգանների աջակցութեան ու խելակորոյս է այնքան, որ չէ նկատում թէ ինչքան այդպիսով խաւցնում է այն անդունդը, այն փտաղուրկ գերեզմանը, որի ծայրին գտնվում է նա...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՄԱՐՄՕՐԷԿԻ ՇԻՋՈՒԿԸ
(Նամակ Օդէսայից)

Հոկտեմբերի 16-ին

Երկու տարի սրանից առաջ գօկտոր Բլիւմէնտալ Օդեսայում կազմակերպեց հակաթոքախտային ցուցահանդէս և մի շարք դասախօսութիւններով ծանօթացրեց հասարակութեանը թոքախտի՝ այդ կրակ ու պատուհասի հետ։

Մինչդեռ ես մի շարք յօդուածներով «Մշակի» էջերում նկարագրում էի հակաթոքախտային այդ ահագին արշաւանքը, հեռագիրը հաղորդեց աւստրիական երիտասարդ բակտերիօլոգ Մարմօրէկի նշանաւոր գիւտի մասին և այն ժամանակ էլ, աչքի առաջ ունենալով անցեալի փորձերը՝ ամենքը զգուշութեամբ վերաբերվեցին այդ լուրին։

Թոքախտի դէմ կռուելու համար Պարիզում վերջին գումարված համաժողովում մասնակցում էր և Մարմօրէկը։ Լրագիրներն արդէն հաղորդեցին, որ նա ծանուցում է արել համաժողովում իր շիջուկի մասին։ Նա զեկուցել է, որ վերջին երկու տարվայ ընթացքում նա կարողացել է ժողովել կլինիքական հարուստ նիւթեր, որոնք ապացուցանում են նրա շիջուկի իսկականութիւնը։ Բացի դրանից, նրա մեթոդով աշխատել է բժիշկների մի ահագին բանակ, որոնց աշխատանքը ունեցել է ամենաբարաւոր հետևանք։ Կլինիքական դիտողութիւնները՝ նրա սեփական եզրակացութիւններով զետեղվել են տասնեաւոր բժշկական օրգաններում բոլոր լեզուներով։ Բոլոր արած փորձերը էլ աւելի աջող պիտի համարել, որովհետև ըստ մեծի մասին շիջուկը գործադրել է հիւանդութեան ծայրայեղ աստիճանին հասած մօմէնտներում։ Զեկուցանողը կանգ առաւ մի շարք յատուկ դէպքերի վրա և ներկայացրեց մանրամասն ցուցումներ բժշկութեան ընթացքի մասին իր շիջուկով։ Ամենանշանակաւորը, որ անհրաժեշտ է յայտարարվել ի գիտութիւն ընդհանուրի, այդ նրա շիջուկի միանգամայն անվնասութիւն լինելն է ամենածայրայեղ և բարդ դէպքերում։ Այս երկու տարվայ միջոցին ինչպէս իր սեփական, այնպէս էլ նրա հարիւրաւոր ընկերների աշխատութիւնները համոզել են նրան, որ նա չէ սխալվում և որ նրա շիջուկը ներկայացնում է մի ինքնուրոյն և աներկրայելի միջոց թոքախտի դէմ։

Մարմօրէկից յետոյ առաջ եկան համաժողովում ուրիշ գիտնականներ, որոնք միանգամայն հաստատեցին նրա զեկուցման եզրակացութիւնները։

Ստոկհոլմի համալսարանի պրոֆ. Լէվինը փորձել է Մարմօրեկի շիջուկը Շվեդիայի, Նորվէգիայի և Ֆինլանդիայի կլինիկներում, ինչպէս անձամբ, այնպէս և այդ երկիրների 27 բժիշկների միջոցով։ Նա ունի 1560 դիտողութիւնների հետևանքները։ Ծանր հիւանդներին շիջուկը անմիջապէս բերում է թեթևութիւն՝ վերականգնում է ախորժակը, թեթևացնում է հաղը և խուխը, կրճատում է դողը։ Բայց իսկական, անվիճելի օգնութիւն վերջնական բնաւորութեամբ և հիւանդութեան զարգացման ընդհատումն նկատվել են բոլոր դիտողութիւնների 52%-ին հաւասար դէպքերում։ «Եթէ նրանց վերաբերութեամբ տեղի չունենայ հիւանդութեան վերադարձ,—վերջացրեց պրոֆ. Լէվինը, այն ժամանակ համարձակ կարելի է պնդել, որ թոքախտի դէմ գտնված է վերջնական միջոցը—և գտնված է պրոֆ. Մարմօրէկի ջանքերով»։

Պրոֆ. Դիւբար և ուրիշ մի քանի անգլիացի և գերմանացի գիտուններ էլ, Լէվինից յետոյ՝ յայտարարեցին համաժողովում այդ շիջուկով արած իրանց փորձերի նոյնանման հետևանքների մասին։ Եւ նրանց միացան Պարիզի մի քանի բժիշկներ, որոնք երկու տարի առաջ երևան եկան, որպէս Մարմօրէկի հակառակորդներ։

Այժմ հասարակութեանը մնում է միայն սպասել, թէ դեռ էլի ինչ կասեն գիտունները և ո՞ր միջոցի վրա նրանք կանգ կառնեն—արդեօք պրոֆ. Մարմօրէկի, թէ՞ Բերինգի։ Այս վերջինիս գիւտի մասին «Մշակի» ընթերցողները արդէն գիտեն։

Ար-Թան

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Նոյեմբերի 3-ին

Ազատարար շարժման ժամանակ խիստ աչքի է ընկնում հոգևորականների բռնած խայտառակ դիրքը։ Սև հարիւրակների խմբին միանում է մի ուժեղ «սրբազան սև հարիւրակների» բանակ, որը իր կոչերով բուն ռուսներին հրաւիրում է կուռել գործադուլ անող բանւորների և նրանց ղեկավար ուսանողների դէմ, համարելով նրանց հայրենիքի և կրօնի թշնամիներ ու դաւաճաններ։ Ինչպէս յայտնի է, այդ կոչերը կարդալու ժամանակ մի քանի եկեղեցիներում խայտառակ դէպքեր պատահեցին։ Բիրա, ոգէտ մարդիկ սկսեցին յարձակվել ուսանողների վրա և պատահած ուսանողին ծեծում էին և մինչև իսկ սպանում։ Առաջադէմ թերթերը միաբերան պատիժ և բացատրութիւն պահանջեցին Մօսկվայի միտրոպօլիտից և քահանաներից շատերից, իսկ բազմաթիւ ընտանիքներ հրապարակով որոշեցին առհասարակ չանել այն մթերավաճառների և մսավաճառների հետ, որոնք հետևել են այդ կուրացած հոգևորականներին։ Միտրոպօլիտը հրապարակով բացատրութիւն տուեց, որ մինչև այժմ չը տեսնված բան էր. բայց անբաւական եղան նրա բացատրութիւնից և նա յետ կանչվեց Պետերբուրգ։

Այժմ հոգևորականները բաժանված են երկու կուսակցութեան. մի կուսակցութիւնը, որի լաւ ներկայացուցիչն է յայտնի գրող Գրիգոր քահանայ Պետրովը, եռանդուն կերպով գործում է և անվախ ու համարձակ բողոքում է թէ բերանացի և թէ գրչով բռնութիւնների դէմ։ Այդ առաջադէմ քահանաների կուսակցութիւնը որոշել է մինչև վերջը կուռել և եկեղեցին ազատել կամայականութիւններից, չինովնիկական և ոստիկանական դիրքից։ Բնորոշ է Պետրով քահանայի մի նամակը, որը զետեղված է «Р. Сл.» № 279-ի մէջ եկեղեցական այլ և այլ ծէսերի վերաբերմամբ։ Քահանան առիթ է բռնում տեղական սօցիալ-դեմօկրատների բանակին պատկանող Բաուման թաղումը, որը տեղի ունեցաւ մօտ հարիւր յիսուն հազար մարդկանց մասնակցութեամբ, շքեղ և փառաւոր հանդիսով, սակայն առանց որ և է կրօնական ծիսակատարութեան։ Հոկայական հանդէսին չէր ուղեկցում և ոչ մի քահանայ, խաչվառների տեղ ծածանվում էին կարմիր դրօշակներ զանազան մակագրութեամբ« ոչ խունկ, ոչ մոմեր էին վառված, ոչ դպիրներ էին երգում և ոչ տիրացուներ, ոչ էլ սաղմոսների խօսքերն էին հնչվում և ոչ արդէն հնութեան նիւթ դարձած շարականներ։ Թաղման ժամանակ դագաղի վրա անմիտ զանազան կրօնական պաշտամունքներ չը կատարվեցին։ Սակայն նրան յարգողները, ընկերները և բարեկամները դագաղը ուղեկցում էին հանդուգնալի կեանքին և գործերին պատշաճ երգերով։ Գերեզմանը փորվեց նոյն բարեկամների ձեռքով և նրանց ձեռքովն էլ դագաղը յանձնվեց մայր ընութեան։ Ամենքի աչքերին արտասունքը անկեղծ էր, իւրաքանչիւրը, ով ինչպէս կարողանում էր, աղօթք էր ուղղում նրա հոգու համար։

Եւ ահա Պետրով քահանան, ի պատասխան այն բազմաթիւ քահանաների և նոյն իսկ ժողովուրդի, որոնք մի տարօրինակ նորութիւն էին գտնում հոգևորականի բացակայութիւնը մկրատված քրիստոնեայի թաղման ժամանակ, այլ և սարսափ էին յայտնում այդպիսի մի թաղում կատարել մայրաքաղաքի քրիստոնեաների գերեզմանատան մէջ, յայտնում է շատ պարզ կերպով, որ զարմանալի և հակաքրիստոնեական ոչինչ չը կայ դրա մէջ։ Եթէ քահանաներին հրաւիրում են հանդուգնալի համարձակվելու Աստուծուն, Պետրով յայտնում է, որ ընկերների և բարեկամների անկեղծ աղօթքը աւելի արժանի է, քան զանազան ծէսերը. էութիւնը աղօթքի մէջ է, իսկ ինչ վերաբերում է քրիստոնէական գերեզմանատան մէջ այդպիսի մի գերեզման զետեղելուն, նա հեգնօրէն պատասխանում է. հողի երեսին մարդիկ կարող են զանազան հաշիւներ ունենալ, բայց հողի տակ նրանք այլ ևս ոչ մի հաշիւ չունեն և որ գլխաւորն է՝ քահանան գտնում է այդ բոլորը աւետարանի իսկական վարդապետութեան համաձայն։

Պետրոֆների թիւը, ի հարկէ, օրըստօրէ կը մեծանայ, խաւարը տեղի է տալիս լոյսին։ Ռուս հոգևորականների մէջ այդ քահանան առաջ է գնում. նոյն իսկ շատ հետևողներ ունի քահանաներից, որոնք դեվիզ են առել, որ քահանան ժողովրդի հոգևոր ծառան է, որ նա ժողովրդի հոգևոր պէտքերը պիտի կատարէ ոչ փողով, այլ ձրի։

Դժբաղդաբար այդ հոսանքը մեզ մօտ չէ նկատվում։ Շատ թշուառութիւններ ունեցանք և ոչ մի անգամ չը տեսանք, որ հարուստ հոգևորականից մէկը իր լուման ձգէ ընդհանուր գանձանակի մէջ։ Նոյն այդ Պետրով քահանան, որի եկամուտը ձեռք է բերվում գրական վաստակից, ռուս վիրաւորների օգտին 1000 ր. նուիրեց։ Սակայն ինչ արին մեր հայ հոգևորականները, որոնք տասնեակ հազարներ ապահովացրել են այս և այն դրամատներում, որոնք այդչափ գումարները հանել են ժողովրդի մէջքից և դեռ շարունակում են նոյն ժողովրդի մէջքին նստած մնալ։

Ալ. Բարութչեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, հոկտեմբ. 22-ին

Շուշու Հայոց Նպաստամատոյց Յանձնաժողովը շնորհակալութիւն յայտնելով այն հասատաութիւններին և պարոններին, որոնք քաղաքի և գաւառի ազէտից առաջ եկած կարօտեալներին իրանց նպաստներով օգնութեան ձեռք կարկառեցին, պարտականութիւն է համարում մի համառօտ հաշիւ ներկայացնել հայ հասարակութեան։

Զանազան հաստատութիւններից և անձերից Յանձնաժողովիս գանձարանը նպաստ է մտել 22191 ռուբ. 7 կոպ.։ Այս երկու ամսվայ ընթացքում քաղաքի և գաւառի բազմաթիւ կարօտեալներից մօտ 700 խնդիրներ են մտել Յանձնաժողովիս գրասենեակը, որոնք նախ քննվել են Յանձնաժողովիս անդամներից կարօտեալների բնակարանում և ապա որոշում է եղել նրանց մասին կանոնաւոր նիստերում։ Նպաստամատոյց Յանձնաժողովը միջոցների սղութեան պատճառով էր ամենակարօտեալներին միայն օգնելու։ Ըստ այսմ նա նպաստներ է բաշխել։

1) Աղէտի ժամանակ հայ և ռուս սպանվածների և անյայտ կորածների ընտանիքներին ամսական 5—15 ռուբլի նպաստ տալով։

2) Աղէտի ժամանակ հայ և ռուս վիրաւորներին և նրանց ընտանիքներին ամսական տալով, կամ միանուագ 15—75 ռուբլի։

3) Աղէտի ժամանակ հրդեհից տուն տեղ այրված կամ թալանված աշխատաւոր ձեռք չունեցող այրի կանանց միանուագ 5—20 ր։

4) Աղէտի ժամանակ խանութն այրված և գործիքները կորցրած արհեստաւորներին գործիքների համար միանուագ 10—30 ռուբլի։

5) Գերութիւնից ազատված 43 մինքէնդցիների 38 հարաբցիների (Զանգեզուրի գաւառից) և այլ գիւղացիների նպաստ՝ մօտ 1000 ր.։

Այսպիսով Նպաստամատոյց Յանձնաժողովը մինչև այսօր նպաստ է բաշխել 11042 ռուբլի 99 կոպէկ։

Յանձնաժողովս նկատելով, որ քաղաքին և գաւառին մեծ սով է սպառնում, որոշեց իր ձեռքի տակ եղած միջոցներից 5000 ռուբլի շրջանառութեամբ Ռուսաստանից ալիւր բերել տալ և իր վրա նստած գնով վաճառել հացթուխներին, որի պատճառով և այժմ մեզ մօտ գրվանքան 4 կոպ. սպիտակ հաց է վաճառվում։

Թէև այս հաշուից երևում է, որ յանձնաժողովս գանձարանում մօտ 10.000 ռուբլի կայ, բայց աչքի առաջ ունենալով, 1) որ ամսական մօտ 500 ր. միայն սպանվածների և վիրաւորների ընտանիքներին է նպաստ տրվում, որոնց գոնէ մի տարի պէտք է օգնել, 2) որ սկզբում նպաստներ նշանակվում էին շատ չափաւոր կերպով միջոցների սղութեան պատճառով և այդ կարօտեալներից շարունակ խնդիրներ են գալիս, որոնց պէտք է նորից բաւարարութիւն տալ, 3) որ թուրքերը հայերին ցորեն չեն վաճառում, ճանապարհները միանգամայն անապահով են, գիւղերից ոմանց սով է սպառնում վար ու ցանք չունենալու պատճառով, 4) որ դրեթէ ամեն օր քաղաքում և գաւառում պատահում են նորանոր սպանութիւններ և ադէտ-

ներ, 5) որ մօտենում է ձմեռը, բազմաթիւ ընտանիքներ տաք հագուստ, անկողին, բնակարան, վառելիք և հաց չունեն։ Այս բոլորից պարզ է, որ մեր ձեռքի տակ եղած միջոցները շատ չնչին են բոլոր կարօտեալներին բաւարարութիւն տալու համար, որոնց կարիքները հարիւր հազարների են հասնում։

Օգնութիւն, շուտափոյթ օգնութիւն է հարկաւոր այս թշուառներին։

Նպաստամատոյց Յանձնաժ. նախագահ՝
Աշոտ եպիսկոպոս
Անդամ-քարտուղար՝
Եղիշէ քահ. Թարխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մոսկվայից մեզ գրում են. «Նկատվում է այստեղ Թուրքերի մեծ հոսանք Կովկասի գըլխաւոր կենտրոններից։ Եկել են այստեղ և տենդային արագութեամբ զէնքեր են ձեռք բերում։ Մոսկվայի բոլոր զինավաճառները եկւոր Թուրքերից տասնեակ հազար բուբլիներով գրաւական են վերցրել, խոստանալով ամեն տեսակ զէնքեր արտասահմանից ստանալուն պէս իրանց հասցնել։ Բայց ո՞վ է մտածում այդ մասին. պէտք է լաւ մտածել»։

—

Նոյեմբերի 9-ի երեկոյեան 7 ժամին անկարգութիւններ տեղի ունեցան Թիֆլիսի Հալլաբար թաղում, Թիֆլիսեան գնդի զօրանոցում։ Զինուորներից մէկը կուում է մի անյայտ տեղացու հետ, որը զինուորին դանակի հարուած է հասցնում առանց լուրջ վէրքի։ Զինուորները ներս են քաշում տեղացուն հերթապահ օֆիցէրի մօտ և խնդրում, որ բանտարկեն նրան։ Օֆիցէրը բանում է տեղացուն։ Մի քիչ յետոյ գալիս է բռնվածի տէրը, մի մաւավաճառ, խօսում օֆիցէրի հետ և բռնվածն ազատվում է։ Զինուորներն այդ լսելով, սկսում վառտանել և տրտնջալ օֆիցէրի վարմունքի դէմ։ Օֆիցէրը զինուորներից վախենալով հեռանում գնում է օֆիցէրական կլուբը։ Նրա ետևից գնացին զինուորներն էլ։ Կլուբում զինուորները դիմեցին օֆիցէրներին և սկսեցին բողոքել իրանց վիճակի մասին, ցոյց տուին անից ստացած դառն նամակները, որոնցով գանգատվում են ծնողները, թէ իրանց խոստացված ամսական 3 բուբլի օժանդակութիւնը չեն տալիս։ «Դուք ստիպում էք ռուսական լինելու մեր ընտանիքներին ծննդավայրերում, իսկ մեզ սոված էք պահում այստեղ»—ասացին զինուորները։ Օֆիցէրները կլուբից հեռացան։ Զինուորները հեռախօսով իրանց մօտ կանչեցին գնդապետին, որը գալով զօրանոց, սկսեց սպառնալ զինուորներին, որ բոլորին գնդակահար անել կը տայ։ Զինուորների միջից լսվեց մի ձայն. «Ցոյց, զէնքի դիմենք»։ Գնդապետը մտաւ զօրանոցի դրասենեակը, հանեց գլխարկն ու ատրճանակը և դուրս եկաւ զօրքերի առաջ ու սկսեց համոզել, որ հանգստանան, խոստանալով կատարել զինուորների պահանջները և մանաւանդ պահեստի զինուորներինը, որոնք պահանջում են տուն թողնել իրանց։ Զինուորները սաստիկ ծեծեցին երկու զինուորի, որոնք գնդապետին յիշեցրել էին, թէ կազակներ բեր և նրանց գնդակներով խաղաղացրու բոլորին։ Այդ դէպքը սարսափ զցեց Հալլաբարում, ուր բոլոր խանութները փակեցին։

—

Թիֆլիսի վրաց ազնուականութեան մասնաւոր գիմնազիայի Ուսուցչանոցը, աշակերտական զրադարանը և պանսիօնի զգեստարանը հոկտեմբերի 22-ի դէպքերին կողոպտվել են զինուորների ձեռքով։ Վնասները հասնում են 1000 բուբլուց աւելի գումարի։ Մօտ օրերս աւերածութիւնները կարկատելու կը ձեռնարկվի և, երբ վերջանայ, խկոյն կը սկսվեն սովորական զբաղմունքները։

—

Թիֆլիսեցի մի խումբ անձեր վճռել են Թիֆլիսում հիմնել քաղաքական կլուբ։ Արդէն մշակել են կանոնադրութիւնը և ուզում են մօտ օրերս սկսել անդամներ հաւաքել և նրանց քննութեանն առաջարկել մշակված նախագիծը։ Մտադրութիւն կայ կլուբը բաց անել 1906 թւի յունվարի 6-ին։

—

«Իվերիա» լրագիրը հաղորդում է, որ Կախէթիայում վերջին օրերս բազմաթիւ ժողովներ են տեղի ունեցել։ Այդ ժողովներն սկըսվել են Կախէթիայից Թիֆլիս գնացած (դուբիական գործերի առիթով) պատգամաւորութեան վերադարձից յետոյ։ Պատգամաւորները բերել էին Գուրիայից զօրքերը հեռացնելու լուրը։ Գիւղացիք այդ լսելով, կարմիր դրոշակներով թափօրներ կազմեցին և սկսեցին շրջել գիւղից գիւղ։

—

Զիաթուրի կայարանի մօտ նոյեմբ. 8-ին, ցերեկվայ ժամը 10-ին, անյայտ անձեր սպանել են կապիտան Անդրէյ Տարասովին։ Սպանողին վիրաւորել և ձերբակալել են։

—

Կօբուլէթի և Նօթանէբի կայարանների միջև, նոյեմբ. 3-ին, ապրանքատար գնացքի վրա յարձակվել են 12 զինված անձեր։ Նրանք կանգնեցրել են գնացքը, կոտրել վագոնը և հանել երկու տակառ վառօդ, տարել անհետացրել են։

—

Նախիջևանի և Շուշու աղէտից վնասվածների օգտին Թիֆլիսի միջնորդներից (տօրգովչիկ) Դարչօ Ղարիբեանի ձեռքով հաւաքած 30 բուբլի։

—

Գօրու գաւառը յատուկ յանձնարարութիւնով ուղարկված գնդապետ Ալֆտանին առաջարկել են գեներալութեան աստիճանի։ Ասում են, որ երբ գեներալութիւն ստանայ, նրան կուղարկեն Գանդակի նահանգը իբրև գեն.-նահանգապետ՝ գեն. Տակայշվիլու փոխարէն։

—

Մեր ընթերցողներին յայտնի է, որ հոկտեմբ. 22-ի արիւնալի դէպքերի առիթով Թիֆլիսի օֆիցէրները ժողով են արել և բաժանվել երկու մասի և այլն։ Այժմ Թիֆլիսի գրէնադէրական 15-րդ գնդի գնդապետը խնդրում է հաղորդել, որ այդ լուրերը բոլորովին սուտ են։ Գնդապետը խնդրում է, որ այսուհետև այդպիսի լուրերին չը հաւատան, մինչև որ տարբերված չը լինեն այդ յօդուածները կամ գնդապետի կամ գնդի յանձնաժողովի օֆիցէրներից մէկի կողմից։

—

Մոսկվայից հեռագրում են Возр. լրագրին նոյեմբ. 10-ից. «Առաջին երկու նիստերում բոլորովին պարզաբանվեց, որ հողը ժողովրդի ընդհանուր սեփականութիւնն է, և անհրաժեշտ ճանաչվեց ոչնչացնել մասնաւոր սեփականութեան բոլոր տեսակները հողի վերաբերմամբ։ Դրա դէմ ոչ մի հակառակութիւն չեղաւ՝ նոյն իսկ այն նահանգների պատգամաւորների կողմից, ուր տիրում է մասնաւոր դիւղացիական հողատիրութիւն։ Երրորդ նիստում քննութեան ենթարկվեցին այն միջոցները, որոնք կարող են արագացնել հողի ընդհանրութեան սեփականութիւն դարձնելը։ Երևացին երկու ուղղութիւններ. մի մասը կարծում էր, որ գիւղացիութիւնը պէտք է միանայ և կազմէ մի ընդհանուր դաշնակցութիւն, պէտք է նպատակին հասնի խաղաղ ճանապարհներով՝ օրինակ՝ կալուածատէրներին և ադմինիստրացիան ենթարկելով լիակատար բոյկոտի, հարկերի վճարումը բոլորովին դադարեցնելով և այլն։ Միւս ուղղութեան պաշտպանները պնդում էին, որ ընդունելով համադիւղացիական կազմակերպութեան և խաղաղ միջոցների անհրաժեշտութիւնը, միաժամանակ անհրաժեշտ են համարում նաև կալուածատէրերի հողերը բռնի մշակելը, անտառները կտրելը և այլն. նրանք չեն հաւատում, որ այդ միջոցներով կարելի կը լինի նպատակի հասնել, դրա համար պընդում են, որ պէտք է պատրաստվել ակտիւ կռվի։—Կառավարութեան նախագծած Գեստական Դումային համաժողովը վերաբերվում է բոլորովին բացասաբար։ Նա անհրաժեշտ է համարում Սահմանադիր Ժողովի հրաւիրումը ընդհանուր ձայնատուութեան հիման վրա. այդ ժողովն ամենից առաջ պէտք է հրամանագրէ, որ ամբողջ հողը դառնայ ժողովրդի սեփականութիւն, և միայն դրանից յետոյ պէտք է վճռէ պետութեան ձևերի մասին։—Ժողովը միաձայն հաւանութիւն տուեց այն կարծիքին, որ պէտք է այժմեանից միջոցներ ձեռք առնել, որ ներկայ կառավարութիւնը չը կարողանայ ոչ մի փոխառութիւն անել»։

—

Տեղի են ունենալու հետևեալ գումարումները. 1) Ռուս սոցիալ-դէմօկրատական կուսակցութեան կովկասեան դաշնակցութեան մեծամասնութեան Թիֆլիսի կոմիտէը կիրակի օրը, նոյեմբերի 13-ին, առաւօտեան ժամը 10-ին նշանակել է միտինգ Վէրայում, արտիլլերիական զօրանոցներից այն կողմ. քննութեան նիւթը լինելու է «Պրօլէտարիատը և առաջիկայ յեղափոխութիւնը»։ 2) Կիրակի, նոյեմբ. 13-ի երեկոյեան 8 ժամին, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում նշանակված է տարեկան ընդհանուր ժողով ժողովրդական ընթերցանութիւններ կատարող ընկերութեան. զբաղմունքի առարկաներն են. ա) նոր անդամների ընտրութիւն, բ) ընկերութեան հաշիւը 1903—1905 թւերի համար, գ) ընկերութեան առաջիկայ գործունէութիւնը և դ) վերջում վարչութեան և վերաքննիչ յանձնաժողովի անդամների ընտրութիւնը։

—

«Մշակի» երէկվայ համարում (№ 224) սպրդած մի սխալ։ Չորրորդ երեսում, չորրորդ սիւնակում, տողի 15 տպված է. «կողոպտում են խանութները»։ Պէտք է լինի. կողոպտում են խանութները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Հայկական ճոր ջարդեր Թիւրքիայում

(Գուլիար. Հեռագր. Գործակալութիւն)

Պոլիս, 21 հոկ.—Մշոյ գաշտին մէջ Ալվարիճ գիւղը այրուած է 2000 քուրդերու կողմէ՝ աջակցութեամբ Թուրք զինուորներու. 150 հայ ընտանիքներ սուրէ անցած են։

—Սասնոյ մօտ Շէնիք գիւղին մէջ բազմաթիւ հայեր ջարդուած են։ Կը վախցուի, որ մի գուցէ Վանայ շրջակայքը զանգուածային կոտորածներ տեղի ունենան։

—Պոլիս, 22 հոկ.—Այս առտու Մուշէն և Սասունէն հասած լուրերը խիստ վրդովեցուցիչ են։ Նոյն կոտորածի պատրաստութիւնները կը տեսնուին, ինչ որ ասկէ առաջ տեսնուած էին Սասնոյ և Մուշի վերջին կոտորածներուն առթիւ. վախ կայ թէ այս յաճախակի յարձակումներուն և Պոլսոյ վերջին մահափորձին պատրուակով հայերի զանգուածային ձերբակալութիւնները՝ ընդհանուր հայկական ջարդեր յառաջ բերեն շուտով։ Հայ երևելիները տակաւին կը յուսան թէ անգլիական և ֆրանսիական դեսպանները ժամանակին պիտի միջամտեն։

Ահա Ալվարիճի կոտորածին մանրամասնութիւնները։ Հոկտ. 6-ին քանի մը հազար քուրդեր և բազմաթիւ Թիւրք զինուորներ պաշարած են Ալվարիճ գիւղը։ Քիւրդերը և զինուորները յարձակելով գիւղին վրա՝ ամբողջ բնակիչները, այր, կին, մանուկ՝ ջարդած են, յետոյ կրակով և դիւրավառ նիւթերով բոլոր տունները այրած են։ Այն բնակիչները, որ ուզած են հրդեհած տուներէն դուրս ելլել, գնդակներով դիմաւորուեր են. շատերը նախընտրած են ողջ ողջ այրիլ՝ գիտնալով, որ ինչ տեսակ բաղդ կը սպասէ իրենց՝ երբ կենդանի մնան. այն մանուկները, որ կը յաջողէին կրակէն ազատիլ՝ նորէն թշնամիին կողմէ բռնելուն մէջ կը նետուէին։ 160 հայ ընտանիքներ ջարդուած են, իսկ գիւղին միայն մոխրակոյտը մնացած է։

Դէպքէն երկու օր առաջ՝ Սասունէն ոչ շատ հեռու՝ Շէնիք գիւղին մէջ քուրդ մը կը սպանուի քուրդի մը կողմէ հարանիքի առեն. քուրդերը անմիջապէս սպանութեան յանցանքը հայոց վերագրելով՝ բազմութեամբ խուժած են Շէնիք գիւղը և մօտաւորապէս 50 կին և երիկ մարդ սպանած են. յետոյ ձգած հեռացած են՝ սպանելով թէ գեղը հիմնայատակ պիտի կործանեն։

—

Որքան որ ալ Պօլսոյ Գինիչ Յանձնախումբը աւարտած է իր աշխատութիւնները՝ սակայն նորէն Նէճիպ Մէլհամէ փաշան կը շարունակէ փնտռել մահափորձի հեղինակները ու մասնակիցները, աշխուժով. և կը ջնդէ թէ գտած է ամբողջ դաւադրութեան հետքերը։ Նէճիպ Մէլհամէ կուզէ, որ յանձնախմբին նիստերը դեռ շարունակուին. բազմաթիւ հայեր ձերբակալել կուտայ, որոնց յանցանքը իրենց հայ ըլլալն է։ Պալատական ոստիկանութեան պետ և զօրաբաժնի հրամանատար Թահսին փաշա երևան հանած և յաջողած է հաստատել թէ՝ Պօլսոյ և արուարձաններուն՝ Գատը-Գեղի, Իւսկիւտարի մէջ հայոց քովէն գտնուած ռումբերը, ինչպէս նաև Օրիանդալ-Բլիւպի հորէն գտնուածները Նէճիպ Մէլհամէի զորածակներուն կողմէ ձգուած են, որովհետև այս ռումբերուն կէսը նման են 96-ի դէպքերէն ձեռք ձգուած և Թօփհանէ մէջ պահուած այն ռումբերուն, որոնք վերջերս անյայտացել են։ Շնորհիւ Թահսինի այս գիւտին՝ Նէճիպ Մէլհամէի վիճակը խախուտ է։

(«Ռազմիկ»)

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Լայպցիգ, հոկտ. 20-ին

Քանի գնում այնքան մեծանում է արտասահմանի հայ ուսանողութեան քանակը. հոսանքի զօրեղութիւնը նկատելի է։ Այս իրողութիւնը կարող է մի բնական հարց ծնեցնել, թէ հայ ուսանողութիւնը ո՞րքան է օգտվում իր նախանձելի դրութիւնից, ծանօթանում է ի մօտոյ եւրոպական կեանքի հետ և օգտվում նրանից, շահաւէտ է գործադրում իր թանկագին ժամերը և թէ քանակի աճմանը զուգընթաց է և որակի աճումը։ Մի հարց, որ այնքան հետաքրքիր և հասարակական տեսակէտից էլ այնքան կարևոր է, քանի որ հասարակութիւնը միշտ ուսանողութեանն է նայում, որը ապագայ հասարակութեան ազն է լինելու։ Նախ քան այս հարցին պատասխանելը պարզենք ուսանողի կոչումը և պարտականութիւնը ընդհանրապէս։ Այստեղ երկու տեսակէտ կարող է լինել. ուսանողը միմիայն մասնագէտ, իր առարկայով պարապող, գրքերի հետ գործ ունեցող անհատ պէտք է լինի և կամ այդ կազմի հետ պէտք է միացնէ և հետևեալը. լուրջ պարապելով հանդերձ նա պէտք է լինի և կեանքի մարդ, ուսումնասիրէ իրան համար եւրոպական օտար կեանքը գործնականապէս, ծանօթանայ նրա դրական և բացասական կողմերի հետ, մի խօսքով տեսականի հետ միացնէ և գործնականը։ Իմ կարծիքով ուսանողը պարտաւոր է վերջին տեսակի անհատ լինել, ասիացի գալով պէտք է եւրօպացի վերադառնայ. ուսանողի առաջնութեան տեսակէտից էլ հարկաւոր է, որ նա գրքերով չը սահմանափակվի, այլ և կեանք քաշէ բառիս լաւ իմաստով, որովհետև կեանքը շատ և շատ անգամ այն տեսակ հրաշքներ է սովորեցնում, որ գրքերը ընդունակ չեն այն անելու։

Այժմ տեսնենք, թէ իրականութեան մէջ ինչ է հայ ուսանողութեան մեծամասնու թիւը։ Արտի ցաւով պէտք է ասենք, որ հայ ուսանողները փակված են մնում կեանքից, շփում չէ լինում կամ շատ չնչին, մնում են մեծ մասամբ այնպէս, ինչպէս եկել էին. եւրօպական կեանքը նրանց վրա շատ թոյլ ազդեցութիւն է թողնում, զրկված նոյն իսկ յաճախ թատրոններ և այլ հասարակական ուրախութեան տեղեր այցելելուց։ Չը կարծէք, թէ ուսանողութիւնը ինքն է ուզում այդպէս լինել, այդպէս մնալ. դա միայն չնչին փոքրամասնութեան ցանկութիւնն է, մեծ մասը զգում է այդ դրութեան անտանելիութիւնը. որ այդ ընթացքը ցաւակար և վատ է, պէտք է փոխել, բայց չէ կարողանում փոխել, որովհետև գրքապանը չի օգնում, ահա ուր է չարիքի արմատը։

Եւրօպայում ծանօթներ ձեռք բերելու, հասարակական զանազան շրջանների մէջ մտնելու և առհասարակ կեանքի հետ ծանօթանալու համար հարկաւոր է փող ունենալ և ով որ այդ չունի, ինչպէս հայ ուսանողութեան մեծամասնութիւնը, նա դատապարտված է սենեակում փակված մնալու։ Ընդհանրապէս Եւրօպայի հայ ուսանողութիւնը այնքան փող չէ ստանում, որով կարելի լինէր մարդավարի ապրելով մի քանի տասնեակ բուբլու բարերար է ճարում, իսկոյն շտապում է Եւրօպա, ասանց նախազգալու այն նահատակութիւնների շարանը, որը վիճակված պէտք է լինի նրան։ Մրա վրա տեսլացրէք յաճախ կրկնվող մի երևոյթ, ուշ փող ստանալը, պարտքեր, և ահա պատկերը ճիշդ կը լինի։ Փողի պակասը ուսանողներին շատ ու շատ բաներից է յետ պահում և զրկում։ Մի բան ցանկանալ, իմանալ որ իր ուզածը լաւ և կարևոր բան է և միշտ էլ նրան չը հասնել, ահա հայ ուսանողութեան մեծամասնութեան դրութիւնը։

Գուրգէն Էդիլեան

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Ուստ, հոկտեմբերի 27-ին

Համիդիական ապականիչ մթնոլորտի մէջ մնված և նրան յատուկ վայրենի բնաւորները, մարդակերութեան դարշելի յատկութիւնները արժանաւորապէս ժառանգած մեր ակարամիտ հայրենակիցների խմբակը շարունակում է իր ազգադաւ աշխատանքը կուսակցականութեան հողին վրա։

Ծայրագոյն ազատամտութեան կեղծ դիմակին տակ, գոյութիւն ունեցող տարբեր կազմակերպութիւնների իբրև թէ բացասական այլ և այլ կողմերի յայտնագործողը յայտնվելով՝ նա մտնում է ամեն տեղ, ուր կայ մէկ-երկու հայ, և ՀԱՍԱԿԱՐ կարգերի բարենորոգչի ձևերով գրաւելով միամիտների ուշադրութիւնը՝ մտցնում նրա մէջ երկպառակութիւն, կատաղի թշնամութիւն դէպի հարազատ հաստատութիւնները, եղբայրասպանութիւն, բարոյական կատարեալ ապականութիւն։ Դժուար չէ գրաւել ոգեւ ամբոխի համակրանքը, քծնելով նրա առաջ, շոյելով նրա վայրենի կրքերը և այդ նորագոյն առաքեալները կատարելապէս հմուտ իրանց արհեստին՝ կարողանում են իրանց հպատակեցնել այդ ամբոխի խաւար ոյժերը, իրանց սև նպատակներին ծառայեցնելու համար։ Եւ ցաւալի է ասել—նոյն այդ ամբոխն է, կամ նրա կազմալուծվող մասերն են, որոնք իրանց ֆիզիքական աշխատանքի դառն վաստակը ուտեցնելով՝ պահպանում են իրանց իսկական բարօրութեան այդ թշնամիներին՝ նրանց գոյութիւնը ապահովում, նրանց չարագործութիւնները քաջալերում դրամական և բարոյական զոհաբերութիւններով։

Ամերիկական ազատ միջավայրում՝ ուր կեանքի պայմանները ազատօրէն տրամադրում են իւրաքանչիւր անհատին ի լոյս հանելու իր թաղնված ամեն գաղտնի և ազնիւ ոյժերը, ուր ամեն ցանկացող անարգել կարող էիր ընական ամեն ձգտումների, ամեն իդէալների համար ազատ հող գտնել՝ մենք—հայերս մեզ հետ բերած լինելով մեր ասիականութիւնը՝ ամեն կերպ աշխատում ենք ի չարը գործ դնելու մարդկային քաղաքակրթութեան արտօնութիւնները—ազատ խօսքը դարձնելով հայհոյանքի ու անարգ զրպարտութիւնների զօրաւոր միջոց—գրիչը ատելութեան ու հալածանքի մի զէնք, մամուլը խնվայել բանակուի մի հրապարակ։

Կուսակցական կռիւները նորութիւն չեն ամերիկահայ գաղթականութեան ներքին կեանքին մէջ։ Նրանց ձգած դրօշմը այնքան բնորոշ է, որ ոչ միայն ներկայացնում են նորեկ մի հային որպէս ամերիկական մի նորութիւն, այլ և ափշեցնում են ոչ մի բանով չապշող ամերիկացիներին։ Սակաւ չէ դաշոյնը փայլել, կամ ատրճանակը պայթել հակառակորդի վրա։ Սակաւ չեն փողոցային վայրենի տուրուդմբոցները կազմակերպվել թշնամի կուսակցութիւնների անդամների մէջ։ Երբ լեզուով կարելի չէ մի բան հասկացնել ախոյանին՝ չէ՞ որ բռունցքի ոյժով կարելի է ցցել նրա գաղթում սեփական գաղափարներն ու հայեացքները հասարակական հրատապ խնդիրների վրա։ Անդրջրհեղեղային մտաւոր զարգացման մէջ գտնվող մեր «ազգայիններին» հարկաւ, թոյլատրելի է այդպիսի կրուուկ միջոցների դիմելը։ Իսկ ոստիկանութիւն, դատարան, լրագրութիւն, հասարակական կարծիք—դրանք անարժէք ցնցոտիներ են—վաղուց է այդ ամենը մի կողմը շպրտել մեր «շատ զգայուն հերոսների» դասակարգը։ Աւելացրէք դրա վրա, որ բանտարկութիւն զոյութիւն չունի այդպիսի քաջագործութիւնների համար։ Ինչպէս ճանկիները վարժված լինելով ամեն ինչ դրամով գնելու՝ առևտուրի նոյն տեսակ ձևեր մտցրած են և իրանց օրէնսդրութիւնների մէջ։ Կարելի է մարդու պատիւը գնել կամ ծախել մի քանի դոլլարով։ Ծեծեցէք, կողքերը փշրեցէք ձեր ախոյանին, ինչ դիրքի էլ պատկանելիս լինի նա և կարող էք ձեր օձիքը ազատել 5—10 դոլլար տուգանք տալով դատարանին։

Կարելի էր անթիւ օրինակներ բերել հաստատելու այս ամենը։ Բաւականանում ենք առ այժմ, յիշելով Նիւ-Եորկի դրագրանային հարցը։

Արդէն գոյութիւն ունեցող մէկ գրագրանը բաւական և կուսակցական տեսակէտով յարմար չը համարվելով՝ բարձրանում է Նիւ-Եորկի մէջ երկրորդ գրագրան հիմնելու հարցը մէկ կուսակցութեան անդամների կողմից։ Հակառակորդ բանակը ընդդիմադրում է։ Հետևանք—«հայկական մի նոր խայտառակութիւն Նիւ-Եորկում»։ Նոր գրագրանի նախանձախնդիր կուսակցութեան կողմից տրվող հրապարակային մի շքեղ հանդէսի միջոցին յարձակվում է հակառակորդների մի խուժան։ Թողնում ենք այդ կռիւի նկարագրութիւնը վերջինների պաշտօնական օրգանին։

—«Լիրիք ժողովասրահին ներկայացմանը՝ վարագոյրը չը բացված՝ հանդիսականներէն մէկը՝ Մ. Գ. հայկական գրագրանի գանձապետը ոտքի ելաւ ու սկսաւ դիտել տալ քաղաքի մէջ երկրորդ գրագրանի մը աւելորդութիւնը, և ահա գլխուն չորս կողմն հաւաքվեցան ագռաւները և սկսան ներդաշնակօրէն կռկռալ։ Այդ միջոցին Գ. մօտեցաւ բեմին ու հրամայեց որ մարդ չի մօտենայ Գ.-ին և թողուն, որ խօսի անիկա։ Կարգ մը ագռաւներ ալ Գ.-ի շուրջը հաւաքվեցան և կռիւ ըսկսաւ։ Իրարանցում, աղաղակ, բռունցք, ատոռ։ Մարդիկ ու աթոռներ թէ առած՝ կը թռչտին սրահին մէջ։ Կոմիտէի շողորդապետներէն Զատիկ-Մաթիկը, բեմին վրա վեր վեր կը ցատկրտէր՝ ոտքն այրած կապիկի մը պէս։... Յետոյ... իրարու շալակ կը թռին, տարօրինակ ձայներ կը հանեն... և, հոյակապ տեսարան մը հոս կը պարզվէր,—ժանգոտած, ծռմռված երեսներ, կախված ականջներ, ծռող քիթեր, սեացած ու կապուտցած աչքեր, խառնված մազեր, ճմռթվված օձիքներ, քակված վզկապներ, պատռատած քօթեր... կոտրած աթոռները վերցնելու և նորեր շարելու համար 65 տալէր կը պահանջէ, սրահը կրկին տրամադրելու համար 25 տալէր կուզէ, ոստիկաններն ալ պէտք է պահել»։...

Եւ որովհետև այդ կռւի մէջ յարձակվածները յանդգնած էին պարծենալու, թէ յարձակումի ենթարկվեցաւ բայց, ծեծելով վռնդեցին հակառակորդներին՝ նոյն լրագիրը քրքական պարծենկոտութեամբ յայտնում է, թէ «մենք էինք յաղթողը և ոչ անոնք. մենք անոցմէ հօթը հատ դղում գլուխ կոտրեցինք»։

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, հոկտեմբ. 19-ին

Սրանից մի քանի օր առաջ (հոկտ. 21-ին) Հաֆթվանում տեղի ունեցաւ մի շատ կարևոր հարցի մասին ժողով։ Ժողովին մասնակցում էին Սալմաստի բոլոր խոշոր հայաբնակ գիւղերի ներկայացուցիչները։ Հարցը վերաբերում էր կրթական գործին. Ռօստօվում ընակվող սալմաստեցի պանդուխտների նախաձեռնութեամբ կազմվել է մի ընկերութիւն՝ «Կրթասիրաց» անունով, որի նպատակն է բաց անել դպրոցներ և օգնել արդէն գոյութիւն ունեցող ուսումնարաններին։ Այդ ընկերութիւնը ներկայումս իր տրամադրութեան տակ ունի մօտ 5000 ռուբլի։ Ներկայացուցչի ասելով կարող է տարեկան մինչև 7000 ր. ծառայեցնել իր նպատակին։ Հէնց իր նպատակին ծառայացնելը և գործադրելը ընկերութիւնը ամենայն իրաւամբ կարևոր բան է համարել և յատկապէս այդ նպատակով էլ մարդ ուղարկել, որպէս զի գործադիր մարմին ունենայ հէնց բուն երկրում՝ Սալմաստում։

Ներկայացուցչի միջոցով ծանօթանալով ընկերութեան նպատակին, կարևոր կանոններին, անմիջապէս ձեռնամուխ եղաւ ընտրութեան և ընտրեց գործադիր մարմին՝ բաղկացած 12 հոգուց, որոնցից 9-ը համարվելու են որպէս ներկայացուցիչներ զանազան գիւղերի, իսկ 3-ը որպէս լրացուցիչ անդամներ։ Այդպէս ուրեմն ընտրութիւնը եղաւ, որ կարելի է գրեթէ աջող համարել։ Ընտրված են աւելի ուշեւոր և դիրք ունեցող անձնաւորութիւններից. մենք հաւատացած ենք, որ «Կրթասիրաց» ընկերութիւնը ամենայն վստահութեամբ կը յանձնէ իր գրամները գործադիր մարմնին, որ որքան հնար է աւելի շուտ սկսէ վերջ տալ ներկայ քաօսային դրութեանը։

Սալմաստի հայոց կրթական գործը միշտ եղել է և այժմ էլ է ողբալի վիճակում։ Սալմաստեցին իսկապէս երախտապարտ է մնում իր եղբայր պանդխտի առաջ, որ այժմ չէ զլանում նեութապէս օգնելու կրթական գործին։ Մնում է միայն բարեմաղթել նախ աջողութիւն «Կրթասիրաց» ընկերութեան ղեկավարուժերին, և ապա՝ գործադիր մարմնին՝ աչալուրջ և բարեխիղճ գործադրութիւն։

Մ. Տ.-Ղազարեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 հոկտեմբերի

ՈՒՂՂՈՒՄՆ։ Հեռագրի մէջ Մոսկվայից նոյեմբերի 9-ից (զէմստվային և քաղաքային գործիչների համաժողովի բէզօլիւցիայի նախագիծը), վերջաւորութիւնը պէտք է կարդալ այսպէս. «բացի դրանից նրան պէտք է իրաւունք տրվի սահմանել հողային rեֆoրմի սկզբունքներ եւ միջոցներ ձեռք առնել բանւորական օրենսդրութեան շրջանի մէջ։ Անյապաղ չը սպասելով ներկայացուցիչների գումարման, պէտք է անցեռանգելի միջոցներ ձեռք առնվեն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 նոյեմբերի։ Բանւորական հարցի սուր դրութիւն ստանալու պատճառով, առևտրի մինիստրութիւնը մտադիր է հրատարակել ժամանակաւոր կանոններ գործադարձների և պրոֆէսիոնալ դաշնակցութիւնների մասին։ Զինւորական և ծովային մինիստրները մասնակցում են մինիստրների խորհրդի բոլոր նիստերին, որը համարեա ամեն օր գումարվում է այստեղ, կոմս Վիտտէի նախագահութեամբ և շաբաթը մի անգամ Ցարսկոէ-Սելոում։

Կոմս Վիտտէն, գործերով ծանրաբեռնված լինելու պատճառով, հրաժարվեց Պետերբուրգի համալսարանի ուսանողներին օգնելու ընկերութեան նախագահելուց և նուիրեց ընկերութեանը 5000 ռուբլի։

Բարձրագոյն ուկազներով զանձարանի դեպարտամէնտի փոխ-դիրեկտոր Վերէէը նշանակված է նոյն դէպարտամէնտի դիրեկտոր։ Ֆինանսների մինիստրի մօտ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Լվով նշանակված է ֆինանսների մինիստրի դիւանատան դիրեկտոր։

Սնունդի հարցի վերաբերմամբ առանձին խորհրդակցութիւնը, ներքին գործերի մինիստրի օգնական Վատացիի նախագահութեամբ, որոշեց տալ սերմեր պատրաստելու, մնունդի, հասարակական աշխատանքների և ցորենի վաճառումը կազմակերպելու համար 2,868,567 ր. նահանգական տեհաններին—Օրլովի—300,000 ր., Սարատովի—մէկ միլիոն, Խէրսօնի—71,626։ Զէմստվային վարչութիւններին—Սկօպինի—50,000 ր,, Ելիսաւետգրադի—30,000 ր., Մոկշանի—50,000 ր., Վալուիսկի—150,000 ր., Բօգուչարի—75,000 ր., Ելիսաւետգրադի—կրկին 1,968,000 ր., Նիկոլաեվսկի և Սամարայի նահանգներին—300,000 ռուբլի։

ՄՕՍԿՎԱ, 9 նոյեմբերի։ Զէմստվային գործիչների համաժողովի ցերեկվայ նիստը նուիրված էր այն վիճաբանութիւններին, թէ ինչպէս պէտք է վերաբերվել կառավարութեանը։ Պրոֆէսոր Կովալէվսկի դէմ էր սահմանադրական ժողովին և խօսեց ի նպաստ միապետութեան Ռուսաստանում։ Կոմս Գէյդէն, միանալով Կովալէվսկուն, ուղղակի ձայնատուութեան դէմ խօսել։ Սաֆօնովը Կօստրոմայից առաջարկում է միանալ այն կուսակցութիւնների հետ, որոնք ձեռք բերին ազատութիւնը։ Կրասովսկին Պետերբուրգից, մի տաք ճառի մէջ, խօսում է ուղղակի ձայնատուութեան դէմ և առաջարկում է միանալ կառավարութեան հետ։ Գուչկով առաջարկում է յայտնել համերաշխութիւն հոկտեմբերի 17-ի մանիֆէստին, արդարացնում է զինւորական դրութիւնը, պահանջում է քննել ծայրայեղ կուսակցութիւնների մասնակցութիւնը ջարդերի մէջ, խօսում է սահմանադրական ժողովի և ծայրայեղ կուսակցութիւնների հետ միանալու դէմ։ Իշխան Եվգէնիյ Տրուբէցկոյ խօսում է զինւորական դրութեան դէմ և ի նպաստ լեհացիներին օգնելու։

Կ. ՊՕԼԻՍ, 9 նոյեմբերի։ Բ. Դուռը հաղորդեց պատասխան պետութիւնների պահանջին ֆինանսական կօնտրօլի վերաբերմամբ Մակեդոնիայում։ Պատասխանը մերժողական է բոլոր կէտերի համար։ Բ. Դուռը մատնացոյց է անում թիւրքաց հասարակական կարծիքի վրա։ Բ. Դուռը համաձայնվում է միայն երկու տարով երկարացնել քաղաքացիական գործակալների լիազօրութեան ժամանակամիջոցը Մակեդոնիայում։

ԼՕՆԴՕՆ, 9 նոյեմբերի։ «Կրոնիկլ» լրագրի խօսքով, 25 միլիոն ֆունտ դումարի եապոնական նոր փոխառութիւնը կը հրատարակվի նոյեմբերի 14-ին. 12 միլիոնը Պարիզում, 6 և մէկ քառորդը Լօնդօնում, 3 և մէկ քառորդ Նիւ-Եորկում և Բերլինում։ Փոխառութիւնը երեք տոկոսանոց է, կուրսը—90։

ՍԱՐԱՏՕՎ, 9 նոյեմբերի։ Կայացաւ սահմանդրական-դէմօկրատիական կուսակցութեան առաջին բազմամարդ ժողովը։

ԻՐԿՈՒՏՍԿ, 9 նոյեմբերի։ Դադարեցրված է զինւորական ցէնզուրան։ Պարապմունքները դիմնազիաներում դադարեցրված են։

ԿԻԵՎ, 9 նոյեմբերի։ Վաճառականական ընկերութիւնը որոշեց միջնորդել պետական բանկում, որ 6 տարով 200,000 ր. կրէդիտ բաց թողնվի՝ երկարատև փոխառութիւններ տալու համար ջարդերից ՀԱՍԱԿԱՆՆԵՐԻՆ։ Վճռված է սահմանել 15 ր. տուրք իւրաքանչիւր առևտրական վկայականի վրա, հնարաւոր կորուստները լրացնելու համար. կազմվեց իրաւակարգի կուսակցութեան տեղական կենտրօնական կօմիտէտ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ, 9 նոյեմբերի։ Բօրսային կօմիտէտը հեռագիր ուղարկեց Վիտտէին, որի մէջ ջերմ ցանկութիւն է յայտնում՝ աջող կերպով աւարտելու դժուար գործը և հաւատացնում է, որ ինքը պատրաստ է հնարաւոր աջակցութիւնը ցոյց տալ կառավարութեանը։ Հասարակութիւնը խնդրում է կոմսին աջակցութիւն ցոյց տալ՝ քաղաքացիական ազատութեան անյապաղ երաշխաւորութեամբ, որ աւետված է հոկտեմբերի 17-ին, որպէս զի ժողովուրդը հաստատ համոզվի, որ կառավարութիւնը անշեղ կերպով ցանկանում է իրագործել սահմանադրութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

ԶԻՆՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային

Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական. և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԶԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

Գ. Ց. ԳՈՒԻՐԴԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.։

Խ. Գ ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համակորիդի (կոնֆլիւենսի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ

բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ժշտական մահճակալներով։

Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆոն 1026.

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱԶԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղա ին, ներքին հ. և ելեքտրօ-բուժութիւն։

Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Գ. Հ. ԹԱԴԵՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.

Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.

Մ. Մ. ԵԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.

Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում ևիկրօսկոպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և սոնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։

(չ.ու.կ.) 15—100

Բ Ժ Ի Շ Կ

Լեւոն Բամոյեան

Վերադարձաւ Կովկասեան Հանքային Ջրերից և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Միքանցասեռական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։ Առաւօտեան 9—12 ժամ, երեկոյեան 3—8 ժամ։ Միքայէլեան փողոց, № 55։ (ա.օ յ. օր.մ.) 30—30

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինսկայա փողոց № 8։ (Ա.ո.)28—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Բ. Նաւասարդեան

Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական զործունէութիւնը։ 20—20

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ

Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար։
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5— 7 ժ.
Հասցէ—Աբասաբադեան հրապարակ № 9, մուտքը Շելկովնիկեան փողոցից № 1։
(Ե.Հ.Կ.) 3—20

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Քարանեան

Ընդունում է ներքին և զայրին հիւանդութիւն ունեցողներին առաւօտեան 9—11 ժ.։ Երեկոյեան 5—7 Վելիամինովսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. տելեֆոն № 1061։ (Հ. Ե. Հ.) 20—20

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ

Բժիշկ Միխայել Դեղեվանովի

Զղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրդանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆոն № 791։ (Տ. օ.) 27—150

Մի ԻՆՏԵԼԻԳԵՆՏ հայ ընտանիքում տրվում են

ԵՐԿՈՒ ՍԵՆԵԱԿ

առանձին մուտքով մի կամ երկու հոգու։ Նոյն տեղ ընդունվում է և մի աշակերտ ամբողջ պանսիոնով։ Դիմել уголъ Жуковскаго „Гудовича д. № 15 (со стороны Жуковскаго.)
3—3

ՕԴԷՍՍԱՅՈՒՄ, Արնաութեան և Եկատերինսկի փողոցների անկիւնում, № 63 տան մէջ բացվել է հիւրանոց

«ՆՈՐ-ԻՏԱԼԻԱ»

յարգելի հասարակութեան ուշադրութիւնն եմ հրաւիրում, որ հիւրանոցում կայ 70 կ.-ից և աւելի թանգ սենեակներ։ Ամսական վճարողներին անվում է զիջում։ Հիւրանոցը գտնվում է քաղաքի կենտրօնում, շատ յարմար տեղում։
Հիւրանոցի տէր՝
Սարգիս Տէր-Ստեփանեան
Հեռախօս № 1729. 2—2

Լոյս տեսաւ
Յարութիւն Նապետեանի

«ՍԻՐՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ»

Գնահատ. գինը 10 կոպէկ

Դիմել հեղինակին — Թիֆլիս, Հալլարբ. Լազարևսկայա 49։ Գրաշրջիկներին՝ գումարով գնելիս՝ 40% զեղչ։ Ճանապարհածախսը իրանց վրա։ Արժէքն ուղարկել կանխիկ։
2—3

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲԻՆ»
Մխայն Միխայիլ Լեբեդևի

„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով



Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաքու, Բաթում։
10, 20, 30 32—36

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, նոյեմբերի 12-ին
կը ներկայացվի

երրորդ անգամ նոր օպերա «ԶԱԶԱ» օպերա 4 գործ. երաժ. Լէոնկավալլոի, թարգմ. Գօրչակովայի։

Մասնակցում են տ.տ. Արցիբաշեվա, Նիկիտսկայա, Միշեցկայա, Կարպօվա, պ.պ. Կարելին, Կօլոսով, Սօկոլսկի, Տամամշեվիչ, Զիսուեակով, Վ.ոլսկի, Դեմիանենկո, Շէյն, Սուրդիս Կանտոր։

Պարերը կը դնէ բալետմէյստր պ. Բեկեֆի
Սկիզբը 8 ժամին

Աշակերտական տոմսակները ծախվում են ամեն օր «Location» կասսայում երեկոյեան 7¾ ժամից։

Անօնս. Կիրակի, նոյեմբերի 13-ին, երկու ներկայացում, ցերեկը «ԵՎԳԷՆԻՅ ՕՆԷԳԻՆ», գիշերը «ԱՖՐԻԿԱՆԿԱ»։

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“

նոր հրատարակութիւններ

Զօմբարա, Ինչու այժմ ամեն մարդ հետաքրքրվում է քաղաքատնտեսական և ընկերավարչական խնդիրներով, 10 կ.։

Ախէլիս, Իրաւունքի ծագումն և պատմութիւնը, 10 կ.։

Գաուլկէ, Կապիտալ և կապիտալիզմ, 12 կ.

Երեք գրքոյկներն էլ—Ս. Թառայեանի թարգմանութեամբ։

Դիմել գրավաճառներին։ Պահեստը. Թիֆլիս, Բեհբութեան փ. 25. 1—3

ԱՂԱՋՈՒՄ ԵՄ

խնամողներին

Գօրիսեցի Խաչատուր Դաւեանցի տեղը, որը մի քանի ամիս առաջ անյայտացել է Մերվից մօտ 30 տարեկան. խնամողներին խնդրում եմ յայտնել ինձ. Անդիժան, բուֆետ վագզալի.
Գալուստ Դաղեանց 1—6

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսիս 13-ին, կը կայանայ Հալլաբարի Շամքօռեցոց եկեղեցու ծխականների ընդհանուր ժողով՝ խորհրդակցելու ծխական դպրոցի մասին։ (Հ. Կ.) 1—2

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՀԱՇԻԱՊԱՀ

որոնում է երեկոյեան պարապմունքներ, յանձն է առնում գրքերի պահելը, հաշուապահութեան կազմակերպելը, բարձի-թողի արված գրքերի ուղղում և հաշիների կազմելը։ Կարող է կատարել և հայերէն լեզուով։ Դիմել № 146-դ պօստ-արկղ, Հաշուապահին։
(Հ. Կ. Ա.) 1—3

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բերուաօվսկի և Պասկեվիչա փողոց. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(տ.օ.) 16—100

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մանանգէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կաղեսսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղեսսկի փողոցից № 2.
(տ. օ.) 51—300

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բոլշայայի փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելեֆոն № 11.
(տ. օ.) 20—20

ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, նոյեմբերի 14-ին
Հայոց դրամատիկ. ընկերութեան խումբը
կը ներկայացնէ

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

պատմակ. լեգենդա 5 արար. Իշխ. Սումբատովի, թարգ. Զ. Տէր-Գրիգորեանի։
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը ժամը ճիշդ 8-ին, երեկոյեան
Տեղերի գները սովորական են
Վարչ. հերթապահ անդամ Տ. Յովհաննէսեան
Հ. Կ. Բեժիսօր Ս. Քափանակեան

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, նոյեմբերի 12-ին
Հայոց Դրամատիկական ընկերութեան խումբը
կը ներկայացնէ

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ

կոմեդիա 3 արար., Պարոնեանի գրուածքից փոխադրեցին Վրոյը և Սարգարեան։

Մասնակցում են տ.տ. Արաքս և Վարդուհի, պ.պ. Ագեան, Բերոյեան, Զարիֆեան, Թաշճեան, Ստեփանեան և Վրոյը։

Սկիզբը ճիշդ ժամը 8-ին
Բեժիսսեօր Ս. Քափանակեան
(ու. Հ.) 2—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., 1 ամսվան 1 ռուբլի։
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.), 1 ամսվան 1 ր. 20 կ. (3½ ֆ.)։

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 ռուբլի։ Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 ռուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատունը (Ճավճավաձեան փողոց տ. № 12)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».

«Մուրճի» գործակալներ.

Աստրախան—Գ. Ք. Մկրտումեան։
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և Յ. Քոչարեան։
Բիբի-Էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան։
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան։
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Սրամ Յակոբեան (Սեծովեղերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. Ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Թիֆլիս—«Դուտտենբերգ» և «Կենտրօնական» գրավաճառ.
Վլադիկաւկազ—Յ. Ք. Սառիկեան (Հիւս. Կովկասի համար)։
Թաւրիզ—բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և Հ. Պանիրեան։
Եղիպտոս—գօլտօր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա)։
Էնզէլի—պ. Գ. Մէլիք-Աբրահամեան։
Նոր-Զուղա—պ. Տիգրան Աբդարեան։
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թունեանց և Լ. Բարայեան։

1905 թուականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը (10 ր.) միանուագ՝ կը ստանան, իբրև պրեմիա, պ. Առանձարի «ՎՇՏԻ ԾԻԾԱՂԸ»։ Նոր գրվող բաժանորդները այդ պրեմիայի փոխարէն, կարող են ստանալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրի տարբեր։ 2—5

Գուտտենբերգ գրախանութում վաճառվում են

«Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի», Մ. Եկմալեանի	10 ր. —
«Ներդաշնակեալ Երգեցողութիւնք Ս. Պատ.» արական բարձր ձայն (Tenore)	9 » —
» » » արական բարձր ձայն (Basso)	3 » —
» » » իգական խոնարհ ձայն (Alto)	2 » —
» » » » բարձր ձայն (Soprano)	2 » —
«Թուրանական Խնդիրներ» Երզնկեանի ա և բ մասերը միասին	— 30 կ.
» » » գ մաս	— 35 »
«Շիրակ» օրացոյց Արինեանի պատի	— 50 »
» » » ծոցի	— 20 »
Սիմէօնեան, «Դասագիրք աշխարհագրութեան» ա տարի նախադիտելիք,	— 35 »
» » գ. տարի մասն քաղաքական	— 60 »
» «Դասագիրք Թուրանութեան»	— 65 »
«Բնագիտութիւն» (կենդանաբ. հանքարան. և բուսաբան.) Զ. Գրիգորեանի	— 60 »
«Բնախօսութիւն», Վօսթէրի, թարգմ. Գ. քահ. Երզնկեանի	— 30 »
» թարգմ. Արշակ Ագապեանի	— 80 »
«Տրամաբանութիւն» Յարութիւնեանի	1 — —
«Բանահիւսութիւն տնտեսութեան» Ճաղարբէգեանի	— 60 »
Դասաւանդման Խորհուրդներ» Գ. քահ. Երզնկեանի	— 30 »
«Ընդհանուր Աշխարհագրութիւն» ուսումնական և բնական աշխ. Գ. քահ. Տէր-Գաբրիէլեան	— 30 »
Դասագիրք կրօնի, ա. տարի Ս. քահ. Տէր-Յովհաննէսեան»	— 20 »

Դիմել Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“, Г. Галустяну. 1—2

Երեկոյեան կուրսեր մայրերի եւ Դաստիարակչուհիների համար

Ս. Վ. Արղութեան Երկայնաբազուկի

Թիֆլիս, Սօլօլակ։ Պասկեվիչի փողոց № 13, Մէկ տարվայ դասընթաց։

Աւանդվի առարկաներն են. մանկական հասակի ֆիզիօլոգիայի և առողջապահութեան հիմքերը։ Ամենօրեայ կեանքի քիմիա։ Ֆիզիկա, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն։ Մանկական հասակի հոգեբանութիւն։ Մանկական պարտէզի տեսական և գործնական զբաղմունքներ։ Մանկական գրականութիւն։ Մանկական սպիտակեղէնների կարելը։ Կուրսերում կան և հայերէն ու վրացերէն լեզուով բաժանմունքներ։ Մատղրութիւն կայ հրաւիրել հեռաւոր դասախօսներին. Գ. Գ. Աղիբեգեան, դօքտօր Վ. Արծրունի, Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ, Գ. Ն. Գեխտման, Ն. Ն. Եչանինով, Պ. Կարօչաշվիլի, Յ. Մանանդեան, բժիշկ Ա. Խաչիսեան։ Ունկնդիրների ընդունելութիւնը հոկտեմբերի 15-ից։ Պարապմունքները կը սկսվին նոյեմբերի 15-ից։ Առաջին ուսումնական տարում դասընթացը 7 ամսվայ է։ Բոլոր դասախօսութիւնների վճարը 40 ռուբլի է։ Վճարվում է կիսամեակներով։ Վարժուհիներին վճարելու դիւրութիւններ կը տրվեն։ (4, 6, 12-ին) 4—3

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. Ул. № 15.